

1035

Ն. ԼԵՆԻՆ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ
ՅԵՎ ԿՐՈՆԸ

3K23
P-27

Հ. Ս. Լ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 318
ՄՈՍԿՎԱ 1927

23 MAY 2005

№ Լ Ե Ն Ի Ն Ց Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

09 NOV 2009

ՅԿԷՅ
Բ-27

Ն. ԼԵՆԻՆ

պ.

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ
ՅԵՎ ԿՐՈՆԸ



005 YAM E S

1 0 SEP 2013

1035

Թարգմ. — Շ - Տեր-Ղազարյան



2970-118

Главлит 58358

Тираж 3000

3-я Тип. Гиза С. С. Р. Армении, Москва, Армянский пер., 2,

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս գրքույկը պարունակում է Լենինի հողվածները՝ կրոնի դեմ գրված: Մենք գտնում ենք, վոր այս գրքույկի հրատարակությունը կարիք չունի արդարացման. — ավելին. մենք գտնում ենք, վոր դրա բացակայությունը մինչև որս պետք է վոր զարմանք հարուցեր: Կրոնը և տերտերականությունը, վոր ամենից շատ գերիշխում են բանվորների ու գյուղացիների շրջանում, անկենսառոժեղ արգելքն են հանդիսանում սոցիալիզմի շինարարության համար, ամենավճռական խոչնդոտը՝ կուլտուրական հեղափոխությունների համար: Այս հանգամանքը հրաշալի կերպով հասկացել են բոլոր ժամանակների հեղափոխականները և անզգար պաշքարել դրանց դեմ: Լենինը մեծ հեղափոխական եր, ուստի և չեր կարող տերտերականության դեմ ամենավճռական պաշքար չմղել: Այս գրքույկում գետեղված հողվածները հրաշալի վկայություն են հանդիսանում այդ պաշքարի:

Սակայն Լենինը շատ լավ գիտեր, վոր կրոնի դեմ հնարավոր չէ պաշքարել այլ կերպ, քան՝ ամենալաշն խավերում տարածելով մատերիալիզմ: Միայն ժամանակակից մատերիալիզմը կարող է հաղթել սնահավատությունը — ամեն տեսակի կրոնի հիմքը:

Այս պատճառով է, վոր Լենինը կրոնի դեմ գրած իր հողվածներում շարունակ հիշեցնում է դիալեկտի-

կական մատերիալիզմը ուսումնասիրելու անհրաժեշտութեան մասին:

Այս պատճառով է, վոր Լենինը նախազգուշացնում է ճղճղան ֆուազների մասին, վորոնք տերտերներին միայն ձեռնտու չեն. վնչ թե ֆուազներով—վորչափ էլ դրանք մտրակիչ լինեն—ալլ գիտութունով, խակական, չկեղծված գիտութունով մենք կհաղթենք յեկեղեցին: Մեր հակակրօնականները Լենինի այս դասերը պետք է կարդան շատ անգամ:

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԿՐՈՆԸ.

Արդի ամբողջ հասարակութեան հիմքը կազմում է բանվոր դասակարգի խոշոր մասսաների շահագործումը բնակչութեան չնչին փոքրամասնութեան ձեռքով. այդ փոքրամասնութիւնը հողատերերի և կապիտալիստների դասակարգին է պատկանում: Արդի հասարակութիւնը ստրկատիրական է, վորովհետև «ազատ» բանվորները, վոր իրենց ամբողջ կյանքում աշխատում են հողուտ կապիտալի, ապրուստի միջոցներ ստանալու «իրավունք ունեն» այն չափով միայն, ինչ չափով վոր այդ պահանջվում է շահույթ արտագրող ստրուկներին կերակրելու համար, կապիտալիստական ստրկութեան ապահովման և հարատևութեան համար:

Բանվորների տնտեսական ճնշումը անխուսափելիորեն առաջացնում է մասսաների ամեն տեսակի քաղաքական ճնշում, սոցիալական ստորացում, հոգեվոր ու բարոյական կյանքի կոպտացում և խավարում: Իրենց տնտեսական ազատագրման համար մղվող պայքարում բան-

վորներն այս կամ այն չափով կարող են քաղաքական ազատութիւնն ձեռք բերել, բայց վոչ մի ազատութիւնն նրանց չի փրկի չքավորութիւնից, գործազրկութիւնից և հարստահարութիւնից մինչև շտապալվի կապիտալի իշխանութիւնը: Կրօնը հոգևոր հարստահարութեան ձևերից մեկն է, վոր ամենուրեք կալիքի և մենակութեան մեջ ընկղմած, հավիտյան ուրիշի համար աշխատող ժողովրդական մասսաների վզին է ծանրացել: Շահագործվող դասակարգերի անզորութիւնը շահագործողների դեմ մղվող պայքարում անխուսափելիորեն անդրաշխարհային ավելի լավ կյանքի հավատն է առաջացնում, ինչպես վայրենու անզորութիւնը բնութեան դեմ պայքարելիս հավատ է ծնում դեպի աստվածները, աստանաները, հրաշքները և այլն: Կրօնը յերկրային կյանքում հնազանդութիւնն և համբերութիւնն է ուսուցանում նրանց, ովքեր ամբողջ կյանքում աշխատում և շարունակ կարիքի մեջ են գտնվում. այդպիսիներին նա մխիթարում է յերկնային վարձատրութեան հույսերով: Իսկ ուրիշի աշխատանքով ապրողներին կրօնը յերկրային կյանքում բարեգործութիւնն է ուսուցանում, առաջարկելով նրանց չափազանց արժան արդարացումն նրանց շահագործող ամբողջ գոյութեան համար, և մատչելի գնով յերկնային բարորութեան տոմսեր է վա-

ճառում: Կրօնը ուղիւն է ժողովրդի համար: Կրօնը հոգեկան արբեցման մի տեսակն է, վորի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային կերպարանքը, իրենց քիչ թե շատ մարդավայել կյանքի պահանջները:

Սակայն ստրուկը կիսով չափ դադարում է ըստրուկ լինելուց, յերբ նա գիտակցում է իր ստրուկութիւնը և իր ազատագրման գործի համար պայքարի է յեղնում: Ժամանակակից գիտակից բանվորը, վոր դաստիարակվել է խոշոր գործարանային արդյունագործութեան մեջ և լուսավորվել է քաղաքի կյանքով, արհամարհանքով դեն է շարտում իրենից կրօնական նախապաշարումները. նա յերկինքը տրամադրում է տերտերներին և բուրժուական կեղծ բարեպաշտներին, իսկ լավագույն կյանքը իրեն համար ձեռք է բերում այստեղ՝ յերկրում: Ժամանակակից պրոլետարիատը հարում է սոցիալիզմին, վորը գիտութեան միջոցով պայքար է վարում կրօնական խավարի դեմ և բանվորին անդրաշխարհային կյանքի հավատից ազատագրում է նրանով, վոր համախմբում է նրան յերկրային լավագույն կյանքի իսկական պայքարի համար:

«Կրօնը պետք է մասնավոր գործ հայտարարվի»: Սովորաբար ընդունված է այս խոսքերով բնորոշել սոցիալիստներին վերաբերմունքը

դեպի կրօնը: Սակայն այս խոսքերի նշանակութ-
թյունը ճշգրտորեն պետք է վորոշել, վորպեսզի
նրանք վոչ մի թյուրիմացություն չառաջաց-
նեն: Մենք պահանջում ենք, վոր կրօնը մաս-
նավոր գործ դառնա պետութեան նկատմամբ,
բայց մենք վոչ մի դեպքում չենք կարող կրօնը
մասնավոր գործ համարել մեր սեփական կու-
սակցութեան համար: Պետութեանը կրօնի հետ
գործ չպիտի ունենա, կրօնական համայնքները
պետական իշխանութեան հետ կապված չպիտի
լինեն: Ամեն վոք միանգամայն ազատ պետք է
դավանի իր ուզած կրօնը, կամ թե չճանաչի և
վոչ մի կրօն, այսինքն՝ աթեիստ¹) լինի, ինչպի-
սին սովորաբար յուրաքանչյուր սոցիալիստն է:
Միանգամայն անհանդուրժելի պիտի համարել,
յերբ քաղաքացիների իրավունքների միջև խըտ-
րություն է դրվում նրանց կրօնական դավա-
նանքի հետևանքով: Նույնիսկ քաղաքացիների
պաշտոնական փաստաթղթերի մեջ այս կամ այն
դավանանքին պատկանելու մասին յեղած ամեն
տեսակի հիշատակութունները անպայմանորեն
պետք է վերացնել: Պետական յեկեղեցուն վո-
չինչ չպետք է տրվի. պետական գումարներից
վոչինչ չպետք է տրվի յեկեղեցական և կրօնա-
կան համայնքներին, չորոնք միանգամայն ազատ,
իշխանութեանից անկախ համախոհ քաղաքացի-

ների միութեաններ պիտի կազմեն: Այս պա-
հանջների լիովին իրագործումը միայն կարող է
վերջ դնել այն ամոթաբեր և անիծյալ անցյա-
լին, յերբ յեկեղեցին ճորտական կախման մեջ
էր պետութեանից, իսկ ուս քաղաքացիները
ճորտական կախումն ունեյին պետական յեկե-
ղեցուց, յերբ գոյութեան ունեյին և գործա-
դրութեան մեջ եյին միջնադարյան, ինկվիզիտո-
րական²) այն որենքները (մինչև որս ել մնա-
ցել են մեր քրեական որենագրքերի և կանոնա-
դրութեաների մեջ), վորոնք հետապնդում եյին
դավանութեան կամ անդավանանք լինելու հա-
մար, բռնադատում եյին մարդու խիղճը. որենք-
ներ, վոր պետական պաշտոնները և զանձա-
բանի յեկամուտները կապում եյին այս կամ
այն պետական յեկեղեցու արբեցման միջոց-
ների բաշխման հետ: Յեկեղեցու լիովին ան-
ջատումը պետութեանից, — ահ այն պահանջը,
վոր սոցիալիստական պրոլետարիատը առաջա-
դրում է ժամանակակից պետութեանը և ժամա-
նակակից յեկեղեցուն:

Ռուսական հեղափոխութեանը պետք է իրա-
գործի այդ պահանջը, իբրև քաղաքական ազա-
տութեան անհրաժեշտ մի մասը: Ռուսական հե-
ղափոխութեանն այս տեսակետից առանձնա-
պես նպաստավոր պայմանների մեջ է գտնվում,

վորովհետև քաղաքական-ձորատափրական միապետութեան անտանելի կազմունջինան⁶) անբավականութեամբ, խմորում ու գայրույթ ե առաջացրել նույնիսկ հոգևորականութեան շարքերում: Թեպետ և հետամնաց, թեպետ և տխմար եր ուս ուղղափառ հոգևորականութեանը, բայց այժմ անգամ նա զարթնեց Ռուսիայի հին, միջնադարյան կարգերի անկման վորոտի ձայնից⁷): Նույնիսկ նա ևս միանում ե ազատութեան պահանջին, բողոքում ե կազմունջինայի և չինովնիկական սանձարձակութեան, վոստիկանական լրտեսութեան դեմ, լրտեսութեան, վոր փաթաթ լած ե «աստժու սպասավորների» վզին: Մենք, սոցիալիստներս, պետք ե ընդառաջ գնանք այս շարժման, հոգևորականութեան միջից դուրս յեկած ազնիվ ու անկեղծ անհատների պահանջը պետք ե հասցնենք մինչև վերջ՝ բռնելով նրանց՝ ազատութեան մասին արտասանած յուրաքանչյուր բառում և պիտի պահանջենք նրանցից, վորպեսզի նրանք կրոնի և վոստիկանութեան միջի կապը կտրուկ կերպով խզեն: Մենք նրանց պետք ե ասենք. յեթե դուք անկեղծ եք, ապա դուք պետք ե կողմնակից լինեք յեկեղեցու և պետութեան, յեկեղեցու և դպրոցի կատարյալ անջատման, դուք կողմնակից պիտի լինեք կրոնը լիովին և անպայմանորեն մասնավոր գործ հայտարարելուն:

Իսկ յեթե ազատութեան հետևողական պահանջները դուք չեք ընդունում, դա նշանակում ե, վոր դուք դեռ ևս գերի յեք ինկվիզիտորական ավանդութեանների ձեռքին, դա նշանակում ե, վոր դուք դեռ ևս աչքադրած եք պետական պաշտոններին և գանձարանի յեկամուտներին, դա նշանակում ե, վոր դուք չեք հավատում ձեր գեների հոգևոր ուժին, դուք շարունակում եք կաշառվել պետական իշխանութեան կողմից, — այն ժամանակ ամբողջ Ռուսաստանի զիտակից բանվորները անողոք կոխվ են հայտարարում ձեզ:

Կրոնը սոցիալիստական պրոլետարիատի կուսակցութեան նկատմամբ մասնավոր գործ չեա Մեր կուսակցութեանը բանվոր դասակարգի ազատագրման գիտակից և առաջավոր մարտիկների միութեանն ե. նման միութեանը չի կարող և չպիտի անտարբեր վերաբերվի դեպի անգիտակցութեանը, խավարը կամ խավարապաշտութեանը, ինչպիսին վոր հանդիսանում են կրոնական հավատալիքները: Մենք պահանջում ենք յեկեղեցու լիակատար անջատումը պետութեանից, վորպեսզի կրոնական մթութեան դեմ պայքարենք զուտ գաղափարական գեներով՝ մեր մամուլով, մեր խոսքով: Մակայն մենք մեր միութեանը — Ռ. Ս. Դ. Բ. Կ.⁸), հիմնեցինք, վորպեսզի ի միջի այլոց, պայքար մղենք հենց բանվորներին կրոնական ա-

մեն տեսակի խարբբայություններով անելու դեմ: Մեզ համար գաղափարական պայքարը վոչ մասնավոր, այլ համակուսակցական, համապրօլետարական գործ է:

Յւթե այդպես է, ինչո՞ւ ապա մենք մեր ծրագրի մեջ չենք հայտարարում, վոր մենք աթեիստներ ենք: Ինչո՞ւ չենք արգելում քրիստոնեաներին և աստծուն հավատացողներին մեր կուսակցության մեջ մտնելը:

Այս հարցի պատասխանը պետք է լուսաբանի բուրժուական-դեմոկրատական ու սոցիալ-դեմոկրատական տեսակետների զգալի տարբերությունը կրոնական հարցը դնելիս:

Մեր ծրագիրն ամբողջովին կառուցված է գիտական, և այն ել հատկապես մատերիալիստական աշխարհայացքի⁶⁾ վրա: Մեր ծրագրի լուսաբանությունը, այս պատճառով, անհրաժեշտորեն ներառնում է նաև կրոնական մթության պատմա-տնտեսական ճշմարիտ արմատների լուսաբանությունը: Մեր պրոպագանդը անհրաժեշտորեն ներառնում է նաև աթեիզմի պրոպագանդը. համապատասխան գիտական գրականության հրատարակումը, վոր մինչև որս արգելվում և հետապնդվում եր միապետական-ճորտատիրական պետական իշխանության կողմից, այժմ մեր կուսակցական աշխատանքի մի

ճյուղը պիտի կազմի: Մենք հիմա, հավանորեն, պետք է հետևենք Ենգելսի այն խորհրդին, վոր նա անցյալում տվել է գերմանական սոցիալիստներին,—թարգմանել և լայն չափով տարածել XVIII ըդ դարի ֆրանսական լուսավորական և աթեիստական գրականությունը:

Մահայն մենք վոչ մի դեպքում չպիտք է պիսվենք և կրոնական հարցին «բանականությունից» վերացված և իդեալիստական ձևակերպում տանք, դասակարգային պայքարից անկախ մի այնպիսի ձևակերպում վոր հաճախակի տալիս են բուրժուական շարքերից դուրս յեկած ռադիկալ—դեմոկրատները⁷⁾: Անհեթեթություն կլինեը մտածել, թե բանվորական մասսաների անվերջ հարստահարության և կոպտացման ըսկզբունքի վրա հիմնված հասարակակարգում, հնարավոր է կրոնական նախապաշարումները ցրել զուտ քարոզելու միջոցով: Բուրժուական սահմանափակություն կլինեը մոռանալ այն մասին, վոր կրոնի ճնշումը մարդկության վրա հասարակակարգի ներքին տնտեսական ճնշման արդյունքը և արտացոլումն է հանդիսանում: Վոչ մի գրքույկով և վոչ մի քարոզով հնարավոր չէ լուսավորել պրոլետարիատին, յեթե նրան չլուսավորի իր սեփական պայքարը՝ կապիտալիզմի մութ ույժերի դեմ: Հարստահարվող դա-

սակարգի միասնութիւնը յերկրային դրախտ ստեղծելու համար մղվող իսկական հեղափոխական պայքարում մեզ համար ավելի կարևոր է, քան պրոլետարիատի միասնական կարծիքը յերկնային դրախտի մասին:

Ահա, թե ինչու մենք մեր ծրագրի մեջ չենք հայտարարում և չպիտի հայտարարենք մեր ակթեիզմի մասին. ահա թե ինչու, մենք չենք արգելում և չպիտի արգելենք մեր կուսակցութեան հետ մերձենալ այն պրոլետարներին, վորո՞ք հին նախապաշարունակների այս կամ այն մնացորդները դեռ պահպանում են իրենց մեջ: Մենք միշտ քարոզելու յենք գիտական աշխարհայեցողութիւն. այս կամ այն «քրիստոնյաների» անհետևողականութեան դեմ պայքարելը մեզ համար անհրաժեշտ է, բայց այս բոլորը դեռ չի նշանակում, վոր կրոնական հարցը պետք է դնել առաջին տեղը, վորը տակավին նրան չի պատկանում. այս դեռ չի նշանակում, վոր մենք կարող ենք թույլ տալ իրոք հեղափոխական, սոստեսական և քաղաքական պայքարի ուժերի ցրումը ի սեր յերրորդական նշանակութիւն ունեցող կարծիքների կամ ցնդաբանութիւնների, վոր անմիջապես կորցնում են իրենց քաղաքական իմաստը, և վորոնց սոստեսական զարգացման ընթացքը շտապ կարգով շարտում է ան-

պետք իրերի պահեստը:

Հետադիմական բուրժուազիան ամեն տեղ հոգացել է և մեզանում ևս սկսում է հոգալ վորպետզի բորբոքի կրոնական թշնամանքը, վորպետզի դեպի այդ կողմը թեքի մասսաների ուշադրութիւնը և հեռու պահի նրանց սոստեսական ու քաղաքական կարևորագույն և արմատական այն հարցերից, վորոնց լուծման է անցել այժմ իր հեղափոխական պայքարի մեջ գործնականապես համախմբված համառուսական պրոլետարիատը: Իսկ պրոլետարիատի ուժերը ջլատելու հետադիմական քաղաքականութիւնն է, վոր այսոր արտահայտվում է, գլխավորապես, սևհարյուրակային ջարդերով⁸), իսկ վաղը, կարող է պատահել, վոր նրա խելքին փչի ինչ վոր ավելի նուրբ բարենորոգութիւններ: Մենք, համենայն դեպս, նրան պետք է հակադրենք մեր պրոլետարական համերաշխութեան և գիտական աշխարհայեցողութեան քարոզը վոր խաղաղ է, վայել և համբերատար և յերկրորդական նշանակութիւն ունեցող տարածայնութիւններ բորբոքելու ձգտումին ոտար:

Հեղափոխական պրոլետարիատը միջոցներ է ձեռնարկելու, վորպետզի կրոնը պետութեան համար, իրապես, մասնավոր գործ դարձնի: Յե՛վ միջնադարյան բորբոսումից մաքրված քաղաքա-

կան կարգերում պրոլետարիատը լայն ու բաց-
արձակ պայքար պիտի վարի մարդկութեան կրօ-
նական շշմեցումի ճշմարիտ աղբյուրի—տնտեսա-
կան ստրկութեան վերացման համար:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊԻ ԿՐՈՆՆ
ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՔԻ ՄԱՍԻՆ.

Պետական դումայի պատգամավոր Սուրկովի⁹)
ճառը սինոդի նախահաշիվը քննելիս և դումայի
մեր ֆրակցիայի բանակուիզներն այդ ճառի (վոր
ստորև տպագրում ենք) պրոեկտը քննելիս, հենց
ներկայիս համար արտասովոր կարևորութուն
ունեցող և որվա չարիք հանդիսացող հարց բար-
ձրացրին: Կրոնի հետ կապված բոլոր խնդիրների
հանդեպ յեղած հետաքրքրութունը, անկասկած,
այժմ ընդգրկել է «հասարակութեան» լայն շր-
ջանները, և թափանցել է վոչ միայն բանվորա-
կան շարժմանը մոտիկ կանգնած ինտելիգեն-
ցիայի շարքերը, այլև բանվորական վորոշ շր-
ջաններ: Սոցիալ-դեմոկրատիան անպայման պար-
տավոր է հանդես գալ դեպի կրոնն ունեցած իր
վերաբերմունքի շարադրանքով:

Սոցիալ-դեմոկրատիան իր ամբողջ աշխար-
հայեցողութունը կառուցում է գիտական սո-
ցիալիզմի, այն է մարքսիզմի¹⁰) վրա: Մարքսիզ-
մի փիլիսոփայական հիմունքը, ինչպես շատ
անգամ հայտարարել են այդ մասին թե Մարք-

սը¹¹⁾ և թե Ենգելսը¹²⁾ հանդիսանում ե դիալեկտիկական մատերալիզմը¹³⁾, վորը լիովին ընդունել ե Ֆրանսական XVIII-րդ դարի և գերմանական՝ Ֆոյերբախի¹⁴⁾ (XIX-րդ դարի առաջին կեսում) մատերիալիզմի պատմական տեղեկանքները, — մատերիալիզմ, վոր անպայման աթեիստական ե և բացարձակապես թշնամական դեպի ամեն մի կրոն: Հիշեցնենք, վոր Ենգելսի ամբողջ «Անտի Դյուրինգը»¹⁵⁾, վորի ձեռագիրը Մարքսը կարգացել ե, մերկացնում ե մատերիալիստ և աթեիստ Դյուրինգին և ցույց տալիս, վոր նրա մատերիալիզմն անհետևողական ե, և նա դրա մեջ կրոնի և կրոնական փիլիսոփայության համար ազատ տեղ ե պահել: Հիշեցնենք, վոր Ենգելսը Լյուդվիգ Ֆոյերբախի մասին զրաժ իր աշխատության մեջ վերջինիս հանդիմանում ե այն առթիվ, վոր նա կրոնի դեմ պայքարել ե վոչ թե նրա վոչնչացման համար, այլ հանուն նրա վերանորոգման, հանուն նոր, «վսեմ» կրոնի ստեղծագործման և այլն: Կրոնը ոպիւում ե ժողովրդի համար, — Մարքսի այս միտքը կրոնի հարցում մարքսիզմի ամբողջ աշխարհայեցողության անկյունաքարն ե կազմում: Ժամանակակից բոլոր կրոններն ու յեկեղեցիները, բոլոր և ամեն տեսակ կրոնական կազմակերպությունները մարքսիզմը միշտ քննում ե, վորպես բուրժուական հետադիմության որդաններ, վո-

2970-48
81-0462

րոնք սպասավորում են բանվոր դասակարգի շահագործման պաշտպանության շրմեցման գործին: Սակայն, միաժամանակ, Ենգելսը շարունակ դատափետել ե այն մարդկանց փորձերը, վորոնք ցանկացել են սոցիալ-դեմոկրատիայից ավելի «ձախ» կամ ավելի «հեղափոխական» ձեվանալ, բանվորական կուսակցության ծրագրի մեջ մտցնել աթեիզմի ուղղակի ճանաչումը՝ կրոնի դեմ կռիվ հայտարարելու իմաստով: Ենգելսը 1874 թ. խոսելով Կոմունայի փախստականների, բլանկիստների (վորոնք ապրում եյին Բերլինում իբր եմիգրանտներ) հուշակավոր մանիֆեստի¹⁶⁾ մասին՝ մեծ հիմարություն ե համարում նրանց աղմկարար ազդարարությունը կրոնի դեմ կռիվ սկսելու առթիվ հայտնելով, վոր կովի նման ձևի հայտարարությունը ամենալավ միջոցն ե դեպի կրոնը յեղած հետաքրքրությունը կենդանացնելու և այսպիսով կրոնի բնական վախճանը դժվարացնելու: Ենգելսը բլանկիստներին մեղադրում ե նույնպես նրա մեջ, վոր վերջիններս չեն հասկանում, թե հարստահարվող մասսաներին կրոնական ստրկությունից գործնականապես ազատագրել կարող ե միայն բանվորական մասսաների դասակարգային պայքարը, ըստ վորում պրոլետարիատի լայն խավերը բազմակողմանի մասնակցություն պիտի ունենան

գիտակից և հեղափոխական հասարակական պրակտիկայի մեջ, մինչդեռ ազդարարել, վոր կրոնի դեմ կռիվ հայտարարելը բանվորական կուսակցութեան քաղաքական խնդիրն է, դա անարխիստական ֆրագ է: Յեւ 1877 թ. Ենգելսը «Անտի Դյուրինգի» մեջ անխնա մտրակելով փիլիսոփա-Դյուրինգին իդեալիզմի և կրոնի նկատմամբ արած ամենափոքր զիջումների համար, նա վոչ պակաս վճռականութեամբ դատապարտում է Դյուրինգի՝ իբր թե հեղափոխական գաղափարը սոցիալիստական հասարակարգում կրոնն արգելելու մասին: Կրոնի դեմ նման կռիվ հայտարարելը նշանակում է, ասում է Ենգելսը, — «Բիսմարկից ավելի քան Բիսմարկ¹⁷) լինել», այսինքն՝ կրկնել կղերականութեան դեմ վարած բիսմարկյան անմատութունը (տխրահուշակ «պայքար հանուն քաղաքակրթութեան», Kulturkampf, այսինքն՝ Բիսմարկի 1870-ական թվականների պայքարը կաթոլիկների գերմանական կուսակցութեան դեմ, «Կենտրոնի» կուսակցութեան դեմ՝ կաթոլիկութունը վոստիկանութեան միջոցով հալածելով): Նման պայքարով Բիսմարկը միայն կաթոլիկների մարտնչող կղերականութեան դրութունն ամրապնդեց, միայն միաս բերեց իսկական կուլտուրայի գործին, վորովհետև նա կրոնական բաժանումները գերադասեց քաղաքական բաժա

նումներին — այդպիսով բանվոր դասակարգի և դեմոկրատիայի վորոշ շերտերի ուշադրութունը դասակարգային և հեղափոխական պայքարի առորյա անելիքներից թեքեց դեպի մակերևույթային և կեղծ-բուրժուական հակակղերական պայքարի կողմը: Մեղադրելով ուլտրահեղափոխական լինելու ցանկութեամբ տարված Դյուրինգին՝ Բիսմարկի անմիտ փորձերն այլ ձևով կրկնելու ցանկութեան մեջ, Ենգելսը բանվորական կուսակցութունից պահանջում է պրոլետարիատի կազմակերպման և լուսավորութեան գործին վարպետորեն և համբերատար աշխատանքով մոտենալ, վորովհետև այդ գործն է, վոր դեպի մահացում պիտի տանի կրոնը. նա բանվորական կուսակցութունից պահանջում է կրոնի դեմ կռիվ հայտարարելու ավանտյուրայից հեռու մընալ: Այս տեսակետը արժատացավ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մարմնի և արյան մեջ, և նա, որինակի համար, կողմնակից դարձավ ճիգ-վիտներին սոցատութուն տալուն, նրանց Գերմանիաներս թողնելուն, ինչպես և այս կամ այն կրոնի դեմ վոստիկանութեան միջոցով ամեն ձեւի պայքար վարելու նախաձեռնութունների վոչնչացման: «Կրոնը մասնավոր գործ հայտարարելը» — Երֆուրտյան ծրագրի¹⁸) (1891 թ.) այս հռչակավոր կետը, սոցիալ-դեմոկրատիայի մատ-

նանշած քաղաքական տակտիկան ավելի ամրա-
պնդեց:

Այդ տակտիկան այժմ արդեն հնամուտութեան
ե վերածվել, նա մարքսիզմի մեջ նոր ազգա-
դում ե առաջացրել դեպի հակառակ կողմը,
դեպի ոպորտունիզմը: Երֆուրտյան ծրագրի այդ
դրութիւնը սկսեցին մեկնաբանել այն իմաս-
տով, վոր մենք, ս. - դ., մեր կուսակցութիւն-
նը, կրոնը մասնավոր գործ ենք համարում, և վոր մեզ
համար, վորպես ս. - դ., վորպես կուսակցութեան,
կրոնը մասնավոր գործ ե: Այս ոպորտունիստա-
կան տեսակետի հետ ուղղակի բանավեճ չսկսե-
լով հանդերձ, 1890 ական թվականներին Ենգելսն
անհրաժեշտ համարեց վճռականապես դուրս
գալ նրա դեմ վոչ բանավեճային, այլ պողիտիկ
ձևով¹⁹): Յեվ Ենգելսն այդ բանը կատարեց միայն
հայտարարութեան ձևով, վորով նա դիտավորյալ
կերպով ընդգծեց, թե սոցիալ-դեմոկրատիան կրո-
նը մասնավոր գործ ե համարում սլետուլթյան նը-
կատմամբ, բայց վոչ մի դեպքում իր, մարքսիզմի,
բանվորական կուսակցութեան նկատմամբ:

Այս ե Մարքսի և Ենգելսի կողմից կրոնական
հարցի մասին արած հայտարարութեան արտա-
քին պատմութիւնը: Մարքսիզմին անփույթ վե-
րաբերվող այն անհատների համար, վորոնք
զուրկ են մտածելու ընդունակութիւնից կամ ել

մտածել չեն ցանկանում, այդ պատմութիւնը
մարքսիզմի անիմաստ հակառութիւնների և տա-
տանումների շախաղ ե թվում. տեսեք, թե ինչպիսի
շիլավիլավ ե ստեղծվել «հետեւողական» աթիզ-
մից և կրոնի «խելացնորութիւնից», տեսեք թե
ինչպիսի «անակղբունքային» տատանում ե կա-
տարվում աստու դեմ հ—հ—հեղափոխական կը-
ռիվ մղելու և աստվածապաշտ բանվորներին յերկ-
չոտութեամբ շողոթորթելու, նրանց չխրանեցնե-
լու վտանգի միջև, և այլն, և այլն: Անարխիս-
տական դատարկախոսների՝ մարքսիզմի դեմ ուղ-
ղած այս ճաշակի հարձակումներ գրականութեան
մեջ մեծ քանակութեամբ կարելի յե գտնել:

Բայց նա, ով փոքր ի շատ ե ընդունակ ե լուրջ
վերաբերմունք ունենալ դեպի մարքսիզմը, խորը
թափանցել նրա փիլիսոփայական հիմունքների
և միջազգային սոցիալ-դեմոկրատիայի գործու-
նեութեան մեջ, նա առանց դժվարութեան կը-
տեսնի, վոր մարքսիզմի տակտիկան կրոնի նը-
կատմամբ չափազանց հետևողական ե ու նախա-
մտածվել ե Մարքսի ու Ենգելսի կողմից, և այն
ամենը, ինչ վոր դիլետանտներն ու խմարները
տատանումներ են համարում ուղղակի և անխու-
սափելի յեզրակացութիւնն ե դիալեկտիկական
մատերիալիզմի: Մեծ սխալ կլիներ կարծել, թե
մարքսիզմի չապացուցված «չափավորութիւնը»

կրօնի հանդեպ բացատրվում է այսպես կոչված «տակտիկական» նկատառումներով—բանվորներին «չխրտնեցնելու» ցանկութեան իմաստով և այլն: Ընդհակառակը մարքսիզմի քաղաքական գիծը այս հարցում ևս անքակտելիորեն կապված է նրա փիլիսոփայական հիմունքների հետ:

Մարքսիզմը մատերիալիզմ է: Յեւ վորպես այդպիսին, նա նույնպես կրօնի անողոք թշնամին է հանդիսանում, ինչպես XVIII-րդ դարի ենցիկլոպեդիստները²⁰) մատերիալիզմը կամ Ֆեյերբախի մատերիալիզմը: Դա կասկածից դուրս է: Բայց Մարքսի և Ենգելսի դիալեկտիկական մատերիալիզմն ավելի հեռու է գնում ենցիկլոպեդիստներից և Ֆեյերբախից. նա մատերիալիստական փիլիսոփայութեանը ոգտագործում է պատմութեան և հասարակական գիտութեանը ընդդէմ դրանց: Մենք պետք է կրօնի դեմ կռվենք: Դա ամբողջ մատերիալիզմի, հետևաբար, նաև մարքսիզմի այբբենն է կազմում: Սակայն մարքսիզմը այբբենի վրա կանգ առած մատերիալիզմ չէ: Մարքսիզմն ավելի հեռու է գնում: Նա ասում է.—պետք է կարողանալ կռվել կրօնի դեմ, իսկ զրա համար հարկավոր է մատերիալիստորեն բացատրել մասսաներին՝ հավատի և կրօնի աղբույրը: Կրօնի դեմ մղվող պայքարը չպիտի սահմանափակել

վերացական-գաղափարական քարոզով, չի կարելի այն վերածել նման քարոզի: Այդ պայքարը պետք է դասակարգային շարժման կոնկրետ գործունեութեան հետ կապել, մի գործունեութեան, վոր ուղղված է կրօնի սոցիալական արմատները վերացնելու դեմ: Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, վոր կրօնը պահպանվում է քաղաքի պրոլետարիատի հետամնաց շերտերում, կիսապրոլետարիատի լայն խավերում, ինչպես և գյուղացիական մասսաների մեջ: Ժողովրդի տխմարութեամբ, —պատասխանում է բուժուկական պրոգրեսիստը, ռադիկալը կամ բուրժուկական մատերիալիստը: Հետևաբար, կորչի կրօնը, կեցցե աթեիզմը: Աթեիստական հայացքների տարածումը մեր գլխավոր անելիքն է: Իսկ մարքսիստն ասում է.—ճիշտ չէ: Այդպիսի հայացքը մակերևույթային բուրժուական-միակողմանի կուլտուրականացում է: Նըման հայացքը կրօնի արմատները բացատրում է վոչ խորը կերպով, վոչ մատերիալիստորեն, այլ իդեյալիստորեն: Ժամանակակից կապիտալիստական յերկրներում այդ արմատները, գլխավորապես, սոցիալական արմատներ են: Աշխատավորական մասսաների սոցիալապես ընկճված դրութեանը, նրանց թվացող լիակատար անգորութեանը կապիտալիզմի կուլտուրի հանդեպ, մի ան-

զորութիւնն՝ վոր, որեցոր, ժամեժամ հազար անգամ ավելի խայտառակ տառապանքներ ու վայրենի տանջանքներ ե պատճառում շարքային բանվորներին, քան յուրաքանչյուր մի արտասովոր դեպք, ինչպիսին ե պատերազմը, յերկրաշարժը և այլն,—ահա թե ինչի մեջ ե թագնված կրոնի ժամանակակից ամենախոր արմատը: «Վասիւր ծնեց աստվածներ»: Կապիտալի այն կույր ուժի վախը,—իսկ կույր ե այդ ուժը, քանի վոր նա չի կարող նախատեսնվել ժողովրդական մասսաների կողմից,—վոր պրոլետարիատին և մանր սեփականատիրոջը կյանքի յուրաքանչյուր քայլափոխում սպառնում ե մատնել և մատնում ե «հանկարծակի», «անսպասելի», «պատահական» կործանման և վոչնչացման, աղքատութեան, պոռնիկութեան և սովատանջ մահվան,—ահա ժամանակակից կրոնի արմատը, վոր ամենից առաջ և ամենից շատ աչքի առաջ պիտի ունենա յուրաքանչյուր մատերիալիստ, յեթե նա չի կամենում նախապատրաստական դասարանի մատերիալիստ մնալ: Կապիտալիստական տաժանակիր պայմանների մեջ ընկողմված մասսաների շարքերում, մասսաներ, վորոնք կախումն ունեն կապիտալիզմի կույր կործանարար ուժժերից, և վոչ մի լուսավորված գրքույք չի կարող կրոնը մեռցնել մինչ այն ժա-

մանակ, յերբ այդ մասսաներն իրենք միահամուռ, կազմակերպված, նախապատրաստված ու գիտակից պայքար կսկսեն կրոնի արմատի—կապիտալի տիրապետութեան ընդդէմ ձեռնարկել:

Արդյոք այստեղից հետևում ե, վոր կրոնի դեմ գրված լուսավորական գրքույկը փաստաբար կամ ավելորդ ե: Վո՛չ: Դրանից հետևում ե, վոր սոցիալ-դեմոկրատիայի աթեիստական պայքարը պիտք ե յենթարկված լինի նրա հիմնական անելիքին,—շահագործվող մասսաների դասակարգային պայքարի զարգացմանը վոր ուղղված ե շահագործողների դեմ:

Նա, ով չի թափանցել դիալեկտիկական մատերիալիզմի, այն ե Մարքսի և Ենգելսի փիլիսոփայութեան հիմունքների մեջ, այդպիսին կարող ե չհասկանալ (կամ, հակառակ պարագայում, անմիջապես չի հասկանա) այդ գրութիւնը: Մի՞թե այդպես ե: Ինչպե՞ս կարելի յե գաղափարական պրոպագանդը, հայտնի գաղափարների քարոզը, քաղաքակրթութեան և հառաջագիմութեան հազարամյա թշնամու (այն ե կրոնի) դեմ ուղղած պայքարը յենթարկել,—դասակարգային պայքարին, տնտեսական և քաղաքական հարցերի ասպարիզում վորոշ գործնական նպատակի հասնելու համար մղվող պայքարին:

Նման առարկութիւնը մարքսիզմի դեմ այն

սովորական ընթացիկ առարկությունների թվին
ե պատկանում, վորոնք վկայում են Մարքսի
դիալեկտիկան կատարելապես չհասկանալու մա-
սին: Այն հակասությունը, վոր շփոթեցնում է
նրանց, ովքեր նման ձեվով են առարկում, դա
կենդանի կյանքի կենդանի հակասություն է,
այսինքն դիալեկտիկական հակասություն է, և
վոչ բանավոր, հնարած հակասություն: Աթե-
իզմի թեորիտիկ պրոպագանդը, այսինքն պրո-
լետարիատի վորոշ խավերի մեջ կրոնական հա-
վատալիքների խորտակումը և այդ նույն խա-
վերի դասակարգային պայքարի հաջողությունը,
ընթացքը և պայմանները արսույլուտ ու անանց
սահմանագծով բաժանել, — դա նշանակում է
դատել վոչ դիալեկտիկորեն, հարաբերական շար-
ժական սահմանագիծը վերածել արսույլուտ
սահմանագծի, նշանակում է բռնությամբ քակ-
տել այն բոլորը, ինչ վոր անքակտելիորեն կապ-
ված է կենդանի իրականության մեջ: Որի՞սակ
վերցնենք: Յենթադրենք, վոր տվյալ շրջանի և
արդյունագործության տվյալ ճյուղի պրոլետա-
րիատը բաժանվում է ասենք բավականաչափ
գիտակցություն ունեցող առաջավոր սոց. դե-
մոկրատների մի շերտի, վորոնք, անկասկած,
աթեիստներ են, և մյուս կողմից՝ բավակա-
նին հետամնաց, դեռ ևս գյուղի և գյուղացի-

ության հետ կապված բանվորներ, վորոնք ա-
տժուհի հավատում են, յեկեղեցի են հաճախում,
կամ նույնիսկ գտնվում են տեղական քահա-
նայի անմիջական ազդեցության տակ, վորը,
ասենք թե, քրիստոնեական բանվորական միու-
թյուն է հիմնում: Յենթադրենք ապա, տնտեսա-
կան պայքարը գործադուլ է առաջացնում այդ-
պիսի մի վայրում: Մարքսիստի համար պար-
տադիր է գործադուլային շարժման հաջողու-
թյունը գերադասել ամեն բանից, կտրուկ կեր-
պով դիմադրություն ցույց տալ, վորպեսզի այդ
պայքարում, բանվորների մեջ աթեիզմի և քրիս-
տոնեության հողի վրա շերտավորում չառաջա-
նա և վճռական կռիվ մղել նման շերտավորման
դեմ: Այդպիսի պայմաններում աթեիստական
քարոզը փաստակար և ավելորդ կարող է լինել,
— վոչ թե հետամնաց խավերին չխրանեցնելու,
ընտրությունների ժամանակ մանդատներ ձեռք
բերելու քաղքենիական նկատառումի տեսակե-
տից, այլ դասակարգային պայքարի իսկական
հառաջադիմության տեսակետից, մի պայքար,
վոր ժամանակակից կապիտալիստական հասա-
րակակարգի պայմաններում քրիստոնյա-բանվոր-
ներին հարյուր անգամ ավելի լավ կերպով կբե-
րի դեպի սոցիալ-դեմոկրատիան, դեպի աթեիզ-
մը, քան սոսկ աթեիստական քարոզը: Այդպիսի մո-

մենտում և նման պարագայում աթերիզմի քարոզիչը ոգնութունն ե հասցնում տերտերին և տերտերներին, վորոնց ուզածը հենց այն ե, վոր բանվորներին՝ գործադուլի ժամանակ առաջացող բաժանումը՝ փոխարինվի բաժանումով ըստ դեպի աստվածը յեղած հավատի: Այն անարխիստը, վորն անպայման կռիվ ե քարոզում աստրծու դեմ, իրապես ոգնած կլինեք տերտերներին և բուրժուազիային (ինչպես և միշտ, անարխիստները իրապես ոգնում են բուրժուազիային): Մարքսիստը պետք ե լինի մատերիալիստ, այն ե՝ կրոնի թշնամի: Սակայն, նա պետք ե դիալեկտիկ մատերիալիստ լինի, այսինքն, նա կրոնի դեմ պայքարելու գործը չպիտի դնի վերացական և զուտ-թեորետիկ հողի վրա, վորը միշտ իրեն հավասար քարոզ ե հանդիսանում, այլ ավելի կոնկրետ ձևով, այն ե՝ դասակարգային պայքարի հողի վրա, վոր իրապես գոյութունն ունի և վորը խոշոր չափերով ու ամենալավ յեղանակով դաստիարակում ե մասսաներին: Մարքսիստը պետք ե կարողանա հաշվի առնել բոլոր կոնկրետ պայմանները, գտնել անարխիզմի և ոպպորտունիզմի միջև գոյութունն ունեցող սահմանագիծը (այդ սահմանագիծը, թեպետ և հարաբերական, շարժական ու փոփոխական ե, բայց նա գոյութունն ունի), մարք-

սիստը չպետք ե ընկնի վոչ անարխիստի վերացական, բանավոր, իրապես դատարկ «բեվոլյուցիոնարիզմի», վոչ ել մանր բուրժուայի կամ թե ազատամիտ ինտելիգենտի ոպորտունիզմի և քաղքենիականության մեջ, վորը կրոնի դեմ պայքարելուց վախենում ե, մոռանում ե այդ իր խնդրի մասին, հաշտվում ե աստծուն հավատալու մտքի հետ, ղեկավարվում ե վոչ թե դասակարգային պայքարի շահերով, այլ փոքրիկ, չնչին հաշիվներով՝ չվիրավորել, չխրտնեցնել, չվախեցնել. «ապրիր, և թույլ տուր, վոր ուրիշներն ել ապրեն» գերիմաստ որենքով և այլն և այլն:

Մատնանշած տեսակետով պետք ե լուծել այն բոլոր մասնավոր հարցերը, վոր վերաբերում են սոցիալ դեմոկրատիայի՝ դեպի կրոնն ունեցած վերաբերմունքին: Որինակ, հաճախ հարց ե առաջանում,—կարո՞ղ ե արդյոք տերտերը ս.-դ. կուսակցության անդամ լինել, և սովորաբար այդ հարցին պատասխանում են դրականապես՝ առանց վորևե վերապահության՝ հիմնը վերով յիվրոպական ս.-դ. կուսակցության փորձի վրա: Սակայն այդ փորձն առաջադրել ե վոչ թե մարքսիզմի ուսմունքը բանվորական շարժման հարցի նկատմամբ կիրառելը, այլ և Արևմուտքին հատուկ այն պատմական պայմանները, վորոնք Ռուսաստանում բացակայում են

(ստորև այդ պայմանների մասին կխոսենք),
այնպես վոր անվերապահ դրական պատաս-
խան տալը այստեղ ճիշտ չէ: Չի կարելի
մեկ ընդմիջտ և բոլոր պայմաններում հայտա-
բարել, թե տերտերները սոց.-դեմ. կուսակցու-
թյան անդամ լինել չեն կարող, ինչպես չպետք
է մեկ ընդմիջտ պնդել և դրա հակառակը: Յե-
թե տերտերը մեզ մոտ է գալիս ձեռք ձեռքի
տված քաղաքական աշխատանք կատարելու հա-
մար և բարեխղճորեն է տանում իր վրա դրած
կուսակցական պարտականութիւնը և յեթե նա
դուրս չի գալիս կուսակցական ծրագրի դեմ,
ապա մենք կարող ենք ընդունել նրան սոցիալ-
դեմոկրատների շարքերը, վորովհետև մեր ծը-
րագրի վոգու ու հիմունքների և տերտերի
կրօնական համոզմունքների միջև գոյութիւն
ունեցող հակասութիւնը, նման պարագայում,
միայն իրեն՝ տերտերին վերաբերող, անձնա-
կան հակասութիւն կլիներ՝ իսկ քաղաքական
կազմակերպութիւնը չի կարող քննութիւն յեն-
թարկել իր անդամներին պարզելու թե կու-
սակցութեան ծրագրի և նրանց տեսակետների
միջև հակասութիւն կա, թե վոչ: Սակայն
պարզ է, վոր նման դեպքը հազվագյուտ բա-
ցառութիւն կարող եր լինել նույնիսկ Յեվրո-
պայում, իսկ Ռուսաստանում այդ յերևույթը

արդեն շատ քիչ է հավանական: Յեվ, յեթե,
որինակ, տերտերը ս. դ. կուսակցութեան մեջ
մտնի և այդ կուսակցութեան շարքերում կրո-
նական հայացքների ակտիվ քարոզն անի, հա-
մարելով, վոր դա է միայն իր գլխավոր և գրեթե
միակ աշխատանքը, ապա անտարակույս է, վոր
կուսակցութիւնը այդպիսի մեկին իր շարքերից
պիտի հեռացնի: Մենք վոչ միայն կարող ենք,
այլև պարտավոր ենք սոց.-դեմ. կուսակցութեան
շարքերը մտցնել այն բոլոր բանվորներին, վո-
րոնք դեռևս աստժուկ հավատում են. մենք ան-
պայման դեմ ենք նրանց կրօնական համոզմունք-
ները նվազագույն չափով անգամ վիրավորելուն,
բայց մենք նրանց մեր շարքերն ենք ընդունում
մեր ծրագրի վոգով դաստիարակելու նպատա-
կով և վոչ թե նրանց հավատի դեմ ակտիվ
պայքար մղելու համար: Մենք կողմնակից ենք
կուսակցութեան ներսում մտքերի ազատութեան,
բայց այնպիսի սահմաններում, վորոնք ազատ
խմբավորումներից դենը չեն անցնում: Մենք
պարտավոր չենք ձեռք ձեռքի տված առաջ ըն-
թանալ այնպիսի հայացքների ակտիվ քարոզիչ-
ների հետ, վորոնց կուսակցութեան մեծամաս-
նութիւնը ժխտում է:

Վերցնենք մի այլ որինակ. կարելի՞ յէ ար-
դի՞ք բոլոր պայմաններում միակերպ դատա-

պարտել ս.~դ. կուսակցութեան անդամներին «սոցիալիզմն իմ կրօնն է» հայտարարութեան և նրման հայտարարութեանը համապատասխանող հայացքներ քարոզելու համար: Վոչ: Մարքսիզմից նահանջելը (հետևաբար և սոցիալիզմից) այստեղ անկասկած է, բայց այդ նահանջի նշանակութիւնը, նրա այսպէս կոչված տեսակարար կշիռը տարբեր պարագաներում զանազան բնույթ կարող են կրել: Այլ բան է, յերբ ագիտատորը, այն մարդը, վոր դուրս և գալիս բանվորական մասսաների առաջ, խոսում է այնպէս, վոր ավելի հասկանալի լինի և իր հայացքներին ավելի իրական բնույթ տալու համար խոսում է այնպիսի տերմիններով, վորոնք սովորական են հետադիմաց մասսաների համար: Սակայն բոլորովին այլ բան է, յերբ զրոյը սկսում է քարոզել աստվածաստեղծում (БОГОСТРОИТЕЛЬСТВО) կամ աստվածատեղծագործական սոցիալիզմ (որինակ, մեր Լուսնաչարսկու և ընկ. վոգով): Ինչ չափով վոր առաջին դեպքում դատապարտութիւնը բժախնդրութիւն, կամ նույնիսկ ագիտացիայի և նրա «մանկավարժական» յեղանակը, ազատութիւնը անտեղի ճշման յենթարկելու միջոց կարելի յէ համարել, նույն չափով կուսակցութեան դատապարտանքը անհրաժեշտ ու պարտադիր պիտի լինի յերկրորդ դեպքի նկատմամբ:

«Սոցիալիզմը կրօնն է»—դրութիւնը վրմանց համար կրօնից դեպի սոցիալիզմ անցնելու ձև է, իսկ այլոց համար, սոցիալիզմից դեպի կրօն անցնելու ձև է:

Այժմ անցնենք այն պայմաններին, վորոնք Արևմուտքում ոպորտունիստական մեկնաբանութիւն են տվել «կրօնը» մասնավոր գործ հայտարարելու թեզիսին: Այստեղ, անշուշտ, նկատելի յէ այն ընդհանուր պատճառների ազդեցութիւնը, վոր առաջացնում են ոպորտունիզմն ընհանրապէս, վորպէս բանվորական շարժման հիմնական շահերի զոհաբերումը նրա բոլեական շահերին: Պրոլետարիատի կուսակցութիւնը պետութիւնից պահանջում է կրօնը մասնավոր գործ հայտարարել, բնավ «մասնավոր գործ» չհամարելով ժողովրդական ոպիռումի, կրօնական սնտիապաշտութեան դեմ վարելիք պայքարի հարցը և այլն: Ոպորտունիստները հարցն այնպէս են խեղաթյուրում, վոր դուրս է գալիս, իբր թէ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը կրօնը մասնավոր գործ է համարել:

Սակայն, բացի ոպորտունիստական սովորական խեղաթյուրումից (վոր կատարելապէս չի պարզաբանվել այն վեճերում, վոր ունեցել է մեր Դումայի Փրակցիան կրօնի առթիվ յելնելու հարցը քննելիս), կան հատուկ պատմա-

կան պայմաններ, վոր յեվրոպական ս.-դ. մեջ առաջ են բերել ժամանակակից, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, չափազանց անտարբեր վերաբերմունքը դեպի կրոնի հարցը: Այդ պայմանները յերկու տեսակ են: Նախ՝ վոր կրոնի դեմ պայքարելու խնդիրը պատմականորեն հեղափոխական բուրժուազիայի խնդիրն է յեղել, և Արևմուտքում այդ խնդիրը զգալի չափով կատարել է (կամ կատարում էր) բուրժուական դեմոկրատիան իր հեղափոխությունների դարաշրջանում, կամ՝ Փետրալիդի²¹) և միջնադարյան կարգերի դեմ ուղղած իր հարձակումների շրջանում: Թե Փրանսիայում, և թե Գերմանիայում կրոնի դեմ բուրժուական կռիվ վարելու ախանջություն գոյություն ունի, մի կռիվ, վոր սկսվել է նախ քան սոցիալիզմը (ենցիկլոպեդիստներ, Փյոտրբախ): Ռուսաստանում, մեր բուրժուական դեմոկրատական հեղափոխության պայմանների համապատասխան այդ խնդիրն ևս ամբողջովին ընկած է բանվոր դասակարգի վզին: Մանրբուրժուական (նարոդնիկական) դեմոկրատիան այդ տեսակետից շատ բան չի արել, ինչպես կարծում են նորաբույս սեհարյուրակային կադետները,²²) կամ կադետական սեհարյուրակայինները («Вех»²³)-ի բանակից), իսկ Յեվրոպայի համեմատությամբ նրանք չափազանց քիչ են արել:

Մյուս կողմից, կրոնի դեմ բուրժուական կռիվ մղելու ավանդությունը Յեվրոպայում ստեղծել է այդ կռիվի բուրժուական սպեցիֆիկ խեղածյուրումը անարխիզմով, վորը, ինչպես մարքսիստները վաղուց արդեն և բազմաթիվ անգամ պարզաբանել են, կանգնած է բուրժուական աշխարհայացքի հողի վրա, «կատաղի» հարձակումներ գործելով նույն բուրժուազիայի վրա: Անարխիստները²⁴) և բլանկիստները ուսմանական յերկրներում²⁵),—Մոստը (վոր, իմիջի այլոց Դյուրինգի աշակերտն է յեղել) և ընկ. Գերմանիայում, 80-ական թվականների անարխիստներն Ավստրիայում²⁶), կրոնի դեմ պայքարելու հեղափոխական Ֆրագմը մինչև nec plus ultra-ի հասցրին: Չարմանալի չէ, վոր յեվրոպական ս.-դ. այժմ շարունակում են ծալել անարխիստների կողմից կորացված փայտը: Դա հասկանալի և վորոշ չափով որինական է, բայց մեզ, ուսական ս.-դ. համար անթույլատրելի յե Արևմուտքի ուրույն պատմական պայմանները աչքաթող անելը:

Յերկրորդ՝ Արևմուտքում ազգային բուրժուական հեղափոխությունների վախճանից հետո, դավանանքի փոքրի շատե ազատություն մըտցնելուց հետո, կրոնի դեմ դեմոկրատական պայքար վարելու հարցը պատմականորեն այն աստի-

ճան յետին տեղը քշվեց բուրժուական դեմոկրատիայի կողմից սոցիալիզմի դեմ մղած պայքարով, վոր բուրժուական կառավարութիւնները զիտակցաբար փորձում եյին մասսաների ուշադրութիւնը հեռացնել սոցիալիզմից, կղերականութիւն դեմ quasi լիբերալ «արշավանք» կազմակերպելով: Այդպիսի բնույթ է կրում նաև Kulturkampfi-ը Գերմանիայում և Ֆրանսիայի բուրժուական հանրապետականների՝ կղերականութիւն դեմ վարած պայքարը: Բուրժուական հակակղերականութիւնը, վորպես բանվորական մասսաների ուշադրութիւնը սոցիալիզմից հեռու պահելու մի միջոց, — ահա, թե ինչն է նախորդել Արևմուտքում սոց.-դեմ. մեջ կրօնի դեմ պայքարելու հանդեպ յեղած «անտարբերութիւն» տարածվելուն: Յե՛վ նորից այդ բոլորը հասկանալի յե և որինական, վորովհետև սոց.-դեմոկրատները բուրժուական և բիւսմարկյան հակակղերականութիւնը պետք է հակադրեյին հենց կրօնի դեմ վարվող պայքարը սոցիալիզմի համար մղվելիք պայքարին յենթարկելը:

Ռուսաստանում պայմանները բոլորովին այլ են: Պրոլետարիատը մեր բուրժուական-դեմոկրատական հեղափոխութիւն անաշնորդն է: Նրա կուսակցութիւնը պետք է բոլոր տեսակի միջնադարյան կարգերի դեմ մղվող պայքար-

րի գաղափարական առաջնորդը հանդիսանա, իսկ դրա հետ զուգընթաց նաև հին պետական կրօնի ու այն վերանորոգելու բոլոր փորձերի կամ նորից, այլ կերպ հիմնավորելու դեմ մղվող պայքարի առաջնորդը: Ուստի, յեթե Ենգելսը համեմատաբար փափուկ ձևով է ուղղում գերմանական ս.-դ. ոպպորտունիզմը, վորոնք բանվորական կուսակցութիւն այն պահանջը, թե պետութիւնը կրօնը մասնավոր գործ պետք է հայտարարել, — փոխարինեց այն հայտարարութիւնը, թե կրօնը մասնավոր գործ է իրեն ս.-դ. և սոց.-դեմ. կուսակցութիւն համար, — ապա հասկանալի յե, վոր ռուսական ոպորտունիստների կողմից գերմանական խեղաթյուրումներն ընդորինակելը հարյուր անգամ ավելի խիստ դատապարտութիւն կարժանանար Ենգելսի կողմից:

Մեր Ֆրակցիան միանգամայն ճիշտ վարվեց, յերբ Դոմայի ամբիոնից հայտարարեց, վոր կրօնը ժողովրդի համար ոպիում է. նա դրանով որինակ տվեց, վորն իբրև հիմք է ծառայելու ռուսական սոց.-դեմոկրատիայի բոլոր յելույթներին՝ կրօնական հարցի մասին: Կարի՞ք կարողոք դենը գնալ և աթեիստական յեզրակացութիւններն ավելի ևս մանրամասն զարգացնել: Կարծում ենք, վոչ: Դա կարող էր

սպաննալ չափազանցութեան հասցնել պրոլի-
տարիատի քաղաքական կուսակցութեան պայ-
քարը կրօնի դեմ: Դա կարող եր բուրժուական
և սոցիալիստական կրօնական պայքարի միջև
գոյութեան ունեցող սահմանագիծը վերացնել:
Առաջին խնդիրը, վոր ս.-դ. Ֆրակցիան սեհար-
յուրակային Դումայում պարտավոր եր կատարե-
լու, պատվով կատարվեց:

Յերկրորդ խնդիրն եր լուսաբանել այն դա-
սակարգային դերը, վորն ունեն յեկեղեցին և
հոգևորականութունը, սեհարյուրակային կառա-
վարութեանն ու բանվոր դասակարգի դեմ պայ-
քարող բուրժուակային ոժանդակելու գոր-
ծում. այդ խնդիրը, վոր գրեթե զլիսավորն ե
ս.-դ. համար, նույնպես պատվով իրագործվեց:
Անշուշտ, այդ նյութի մասին ավելի շատ բան
կարելի յե ասել, և ս.-դ. հետագա յելույթները
աչքի առաջ կունենան այն հանգամանքը, թե
ինչով պետք ե լրացնել ընկ. Սուրկովի ճառը,
բայց այնուամենայնիվ նրա ճառը սքանչելի յեր, և
մեր կուսակցութեան ուղղակի պարտականութեու-
նը պիտի լինի իր բոլոր կուսակցական կազմա-
կերպութեաննրի միջոցով այդ ճառը տարածել:

Յերրորդ խնդիրը—այդ այն ե, վոր ամե-
նայն մանրամասնութեամբ պիտի լուսաբանվեր
«կրօնը մասնավոր գործ հայտարարելու» դրու-

թեան ճիշտ իմաստը, մի դրութեան, վոր գեր-
մանական ոպորտունիստները հաճախակի աղա-
վաղում են: Դժբախտաբար, ընկ. Սուրկովը այդ
չարեց: Դա ավելի քան ցավալի յե, քանի վոր
Ֆրակցիան, իր նախընթաց գործունեութեան մեջ,
այդ հարցի նկատմամբ թույլ տվեց անել ընկ. Բե-
լոուսովի²⁷) այն սխալը, վորն իր ժամանակ մատ-
նանշել ե «Պրոլետարիյ» թերթը: Ֆրակցիայի մեջ
առաջացած վեճերը ցույց են տալիս, վոր աթե-
իզմի շուրջը տեղի ունեցած վեճը նրանից քո-
ղարկեց կրօնը մասնավոր գործ հայտարարե-
լու տխրահոգակ պահանջի ճիշտ շարադրանքը:
Ամբողջ Ֆրակցիայի կողմից թույլատրված սխա-
լի համար մենք չենք մեղադրի միայն ընկ.
Սուրկովին: Դեռ ավելին: Պարզապես խոստո-
վանենք, վոր այստեղ մեղավորը ամբողջ կու-
սակցութեանն ե, վորը բավաբար չափով չը լու-
սաբանեց այդ հարցը և բավաբար չափով ս.-դ.
գիտութեան մեջ չեր նախապատրաստել Ենգել-
սի կողմից գերմանական ոպորտունիստներին
ուղղված նկատողութեան նշանակութեունը: Ֆր-
րակցիայում առաջացած վեճերն ապացուցում
են, վոր այդ հարցը պարզ ձևով չըմբռնե-
լու արդյունք ե և վոչ թե Մարքսի ուսմուն-
քը հաշվի չառնելու ցանկութեան արդյունք, և
մենք համոզված ենք, վոր սխալը կշտկվի

Ֆրակցիայի հետագա յելույթների ընթացքում:

Ընդհանուր առմամբ, կրկնում ենք, ընկ. Սուրկովի ճառը սքանչելի յե և պիտի տարածվի բոլոր կազմակերպութունների կողմից: Այդ ճառի քննությամբ Ֆրակցիան ապացուցեց, վոր նա լիովին բարեխիղճ կերպով ե կատարել իր ս.-դ. պարտքը: Մնում ե ցանկություն հայտնել, վոր Ֆրակցիայի ներսում կատարվող վեճերի վերաբերմամբ թղթակցություններ ավելի հաճախ յերեվան կուսակցական մամուլի մեջ՝ Ֆրակցիան կուսակցությանը ավելի ես մոտեցնելու, Ֆրակցիայի կատարած ներքին դժվարին աշխատանքին կուսակցությունը իրազեկ պահելու և կուսակցության ու Ֆրակցիայի գործունեության միջև գաղափարական միություն հաստատելու համար:

ԴԱՍՍԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻԲԸ ԴԵՊԻ ԿՐՈՆԸ:

Սինոդի նախահաշվի հարցի, ապա հոգևոր կոչումը թողած անձանց իրավունք վերադարձնելու խնդրի, և, վերջապես, հնածիսական (старообрядческие) համայնքների հարցի շուրջը Պետական Դումայում տեղի ունեցած վեճերը չափազանց ուսանելի նյութ ավին բնութագծելու ուսական քաղաքական կուսակցությունները, նրանց դեպի յեկեղեցին ու կրոնը ունեցած վերաբերմունքի տեսակետից: Ընդհանուր մի հայացք ձգենք այդ նյութի վրա, կանգ առնելով, գլխավորապես, Սինոդի նախահաշիվների շուրջը տեղի ունեցած վեճերի վրա (վերև նիշված մյուս հարցերի շուրջը տեղի ունեցած վեճերը քննելու ժամանակ սղագիր հաշվետվությունները դեռ չեն ստացվել):

Առաջին յեզրակացությունը, վոր Դումայի վեճերը քննելու ժամանակ հատկապես աչքի յե ընկնում, կայանում ե նրանում, վոր մարտնչող կղերականությունը Ռուսաստանում վոչ միայն գոյություն ունի, այլև ակնբախ կերպով ավելի

ու ավելի ուժեղանում է և կազմակերպվում: Ապրիլի 16-ին Միտրոֆան յեպիսկոպոսը հայտարարեց. «Մեր դումայական գործունեյության առաջին քայլերն ուղղված էյին դեպի այն, վորպեսզի մենք՝ ժողովրդական բարձր ընտրությամբ հարգվածներս՝ այստեղ Դումայի մեջ կուսակցական բաժանումներից ավելի բարձր կանգնենք և կազմենք հոգևորականության մի խմբակցություն, վորը բոլոր կողմերը լուսավորի իր ետիքական տեսակետով... Ի՞նչ է պատճառը, վոր մենք չհասանք այդ իդեալական դրության: Մեղավոր են նրանք, ովքեր ձեզ (այն է կադետների և «ձախերի») հետ նստած են այս նստարանների վրա, այսինքն՝ ոպողիցիային պատկանող հոգևորական պատգամավորները: Դրանք առաջինն էյին, վոր ձայն բարձրացրին և հայտարարեցին, վոր դա վոչ այլ ինչ է, քան կղերական կուսակցության ծնունդը և վոր այդ ծայր աստիճան անցանկալի յե: Անշուշտ, չի կարելի ասել, վոր ոռսական ուղղափառ հոգևորականությունը կղերական է: Մենք յերբեք նման տենդենցներ չենք ունեցել, և առանձին խմբակցություն կազմելու ցանկություն առաջադրելու ժամանակ հետապնդել ենք զուտ բարոյական, ետիքական նպատակներ, իսկ այժմ, պարոններ, յերբ նման տարածայ-

նության հետևանքով, վոր ձախ պատգամավորները մտցրին մեր յեղբայրական միջավայրի մեջ, բաժանում ու յերկպառակություն է առաջացել, այժմ դուք (այն է կադետներդ) այդ բանի մեջ մեզ եք մեղադրում»:

Միտրոֆան յեպիսկոպոսը իր անգրագետ ճառով բացեց գաղտնիքը: Այդ յեպիսկոպոսի կարծիքով ձախերը մեղավոր են նրանում, վոր դումայի տերտերների մի մասին հեռացրին հատուկ «բարոյական» (այդ բառը ժողովրդին խաբելու համար, իհարկե, ավելի հարմար է, քան «կղերական» բառը), խմբակցություն կազմակերպելուց!

Գրեթե մի ամիս անց, մայիսի 13-ին Յեվլոգիյ յեպիսկոպոսը Դումայում կարդաց «Դումայի հոգևորականության վորոշումը». «Դումայի հոգևորականության ճնշող մեծամասնությունը գրտնում է... վոր «ուղղափառ յեկեղեցու առաջնակարգ ու տիրապետող դիրքի» շահերի տեսակետից հնածեսներին ազատ քարոզի իրավունք տալը, բացարձակ ձևով հնածիսական համայնքներ հիմնելը և հնածիսական հոգևորականությանը քահանայական կոչումով վերանվանելը անթույլատրելի յե: Ռուս տերտերների «զուտ բարոյական տեսակետը» լիովին դրսևորվեց, վորպես զտարյուն կղերականություն: Դումայի հոգևոր-

բականության «ճնշող մեծամասնությունը», վորի անունից Յեվրոզիյ յեպիսկոպոսը խոսում է հավանորեն, կազմված է յերրորդ Դումայի 29 աջ և չափավոր աջ տերտերներից: Հավանորեն ոպոզիցիային հարել են 4 քահանա պրոգրեսիստների ու խաղաղ վերածնվողների (МИРОСОБНОВЛЕНЦЕВ) և մեկ հոգի՝ լեհ—լիտովյան խըմբից:

Իսկ վո՞րն է «Դումայի (հարկավոր է ավելաքանիստ հունիս-յերեքյան) հոգևորականության ճնշող մեծամասնության «գուտ—բարոյական» ետիքական տեսակետը»: Ահավասիկ մի քանի քաղվածքներ նրանց ճառերից. «Յես միայն ասում եմ, վոր այդ (այն է յեկեղեցական) վերանորոգումների նախաձեռնությունը պետք է յեկեղեցու ներսից յելնի, և վոչ թե դրսից, վոչ պետության և, անշուշտ, վոչ ել բյուրջետային հանձնաժողովի կողմից: Չե՞ վոր, յեկեղեցին աստվածային և հավիտենական հիմնարկություն է, նրա որեւէքները անխախտելի յեն, իսկ պետական կյանքի իդեալները, ինչպես հայտնի յե, շարունակ փոփոխությունների են յենթարկվում» (Յեվրոզիյ յեպիսկոպոս, 14 ապրիլի): Հոնաորը վերհիշում է «աղմկալից պատմական համեմատությունը»,—յեկեղեցական գուլքերի սեկուլյարիզացիան Յեկատերինա II ժամանակ. «Ո՞վ

կարող է յերաշխավորել, վոր բյուրջետային հանձնաժողովը, վորը ներկա տարում ցանկություն հայտնեց պետական հսկողության յենթարկել նրանց (յեկեղեցական միջոցները), մյուս տարի չի ցանկանա այդ միջոցները պետական գանձարան մտցնել, իսկ այնուհետև և վերջնականապես, նրանց կառավարելու իրավունքը յեկեղեցական իշխանությունից խլի և քաղաքական կամ պետական իշխանությունը հանձնի... Յեկեղեցական կանոններն ասում են՝ յեթե յեպիսկոպոսին պահ են տրված քրիստոնեական հոգիները, ապա առավել ևս պահ պիտի տրվեն յեկեղեցական գուլքերը... Այժմ ձեր (Դումայի պատգամավորների) հանդեպ կանգնած է ձեր հոգևոր մայրը, ուղղափառ սուրբ յեկեղեցին. և դուք նրա վերաբերմամբ վոչ միայն ժողովրդական ներկայացուցիչներ եք, այլև հոգևոր գավակներ» (նույն տեղում):

Այս ճառը իսկական կղերական ճառ է: Յեկեղեցին պետությունից բարձր է դասվում, նա բարձր է անցողակի, յերկրային կյանքից: Յեկեղեցին պետությունը չի ներում յեկեղեցական գուլքելի սեկուլյարիզացիան: Յեկեղեցին առաջնակարգ և տիրապետող դիրք է պահանջում իր համար: Նրա համար դումայի պատգամավորները վոչ միայն, ավելի ճիշտ ասած, վոչ այնքան

ժողովրդի ներկայացուցիչներ են, վորքան «հոգևոր զավակներ»:

Դրանք փարաշավոր չինովներ են, այլ ինչպես ասեց ս.~դ. Սուրկովը, փարաշավոր ճորտատերեր: Յեկեղեցու ավատական կարգերի արտոնութունների պաշտպանութունը, բացորոշ կերպով միջնադարյան կարգերի պաշտպանութունը— այս է յերբորդոմայական հոգևորականության մեծամասնության քաղաքականության եյութունը: Յեվլոզիյ յեպիսկոպոսը բոլորովին էլ բացառութուն չէ: Գեպեցիին նույնպես ազմկում է «սեկուլյարիզացիայի» դեմ, վորպես անթուլատրելի «վերավորանքի» (14 ապրիլի): Տերտեր Մաշկեիչը հարձակվում է հոկտեմբերյան զեկուցման վրա այն պատճառով, վոր նա ձգտում է «սասանել այն պատմական և կանոնական հիմքերը, վորոնց վրա կանգնած է յեղել և կանգնելու յե մեր յեկեղեցական կյանքը», «ուսու ուղղափառ յեկեղեցու կյանքն ու գործունեյութունը կանոնական ճանապարհից տեղափոխել մի այնպիսի ճանապարհ, ուր յեկեղեցու իսկական իշխանները~յեպիսկոպոսները գրեթե իրենց բոլոր իրավունքները, վոր ժառանգել են առաքյալներից, — պիտի զիջեն աշխարհիկ իշխաններին»... «Դա վոչ այլ ինչ է, քան... հարձակում ուրիշի սեփականության, յեկեղեցու իրավունքների և նրա

արժանապատվության վրա»... «Զեկուցողը մեզ տանում է դեպի յեկեղեցական կյանքի կանոնավոր կարգերի քայքայում, նա ցանկանում է ուղղափառ յեկեղեցին իր բոլոր տնտեսական ֆունկցիաներով յենթարկել Պետական Դոմային, այնպիսի մի հիմնարկության, վոր կազմված է ամենատարբեր տարրերից, վորոնք մեր պետության սահմաններում հանդուրժելի և անհանդուրժելի դավանանքների յեն պատկանում» (14 ապրիլի):

Ռուս նարոդները և ազատամիտները յերկար ժամանակ իրենք իրենց միխթարում, ավելի ճիշտ, խաբում էին այն «թերթիայով», թե Ռուսաստանում մարտնչող կղերականության, «յեկեղեցու իշխանների» և աշխարհիկ իշխանության միջև պայքար առաջանալու համար հող չկա և այլն: Նարոդնիկական և ազատամիտ միշարք այլ իլլյուզաների թվում մեր հեղափոխութունը ցրեց նաև այդ իլլյուզիան: Կղերականութունը գոյութուն ունեւ ծածկված ձևով, քանի վոր միապետության գոյութունը անվտանգ ու անձեռնմխելի յեր: Վոստիկանության և բյուրոկրատիայի ամենագոր իշխանութունը «հասարակության» և ժողովրդի աչքից ծածուկ եր պահում դասակարգային պայքարն ընդհանրապես, և փարաշավոր տերտերներին՝ «զազրելի սամիկ ժողովրդի» դեմ մղած պայքարը մասնավորապես:

Հեղափոխական պրոլետարիատի և գյուղացիութ-
յան՝ ճորտատիրական միապետութեան մեջ առա-
ջացրած առաջին ճեղքվածքը գաղտնիքը ակնհայտ
դարձրեց: Հենց վոր պրոլետարիատը և բուրժուա-
կան դեմոկրատիայի առաջավոր տարրերը 1905թ.
վերջին քաղաքական ազատութիւն, քաղաքա-
կան կազմակերպութիւն ձեռք բերելուց հետո
սկսեցին ոգտովել այդ ազատութիւնից, այդ
ժամանակ ինքնուրույն և բացահայտ կազմա-
կերպութեան դիմել սկսեցին հետադիմական
դասակարգերը: Նրանք միահեծան արսոլյուտտիզ-
մի կարգերում չեյին կազմակերպվում և առանձ-
նապես ակնառու ձևով չեյին դուրս գալիս, վոչ թե
այն պատճառով, վոր նրանք անընդունակ եյին
կազմակերպվելու և քաղաքական պայքար մղելու,
այլ այն պատճառով, վոր նրանք դեռ այն ժա-
մանակ ինքնուրույն դասակարգային կազմակեր-
պութեան անհրաժեշտութեան լուրջ կարիքը չե-
յին տեսնում: Նրանք չեյին հավատում, վոր
Ռուսաստանում մասսայական շարժում կարող ե
առաջանալ միապետութեան ե ճորտատերերի դեմ:
Նրանք միանգամայն համոզված եյին, վոր ու-
միկ ժողովրդին ձեռքի մեջ պահելու համար
մտրակն ել հերիք ե: Միապետութեան հասցրած
առաջին վերքերը միապետութեան ոժանդակող
և նրա կարիքը զգացող սոցիալական տարրերին

հարկադրեցին լույս աշխարհ դուրս գալ: Հուն-
վարի 9-ը, 1905 թ. գործադուլային շարժում-
ները և հոկտեմբեր-դեկտեմբերյան հեղափոխու-
թիւնն առաջացնելու ընդունակ մասսաների
դեմ արդեն անհնարին ե միայն մտրակի միջո-
ցով պայքարել: Անհրաժեշտ ե թեափոխել ինք-
նուրույն քաղաքական կազմակերպութիւնների
շրջանը, անհրաժեշտ ե, վոր միացյալ ազնվակա-
նութեան խորհուրդը սև հարյուրակներ կազմա-
կերպեր և անողոք դեմագոգիա սկսեր, հարկավոմ
եր, վոր «յեկեղեցու իշխանները—յեպիսկոպոս-
ները» հետադիմական հոգևվորականութիւնից
ինքնուրույն ուժ կազմակերպեյին:

Յերրորդ դուման և ուսական հակահեղա-
փոխութեան յերրորդ դումայական շրջանը հենց
նրանով ե բնույթագծվում, վոր հետադիմական
ուժերի այդ կազմակերպութիւնը լույս աշխարհ
դուրս յեկավ և սկսեց համազգային մասշտաբով
լայն ծավալ ընդունել ու հատուկ սևհարյուրա-
կային-բուրժուական «պարլամենտ» պահանջել:
Մարտնչող կղերականութիւնը ինքզինքը աշկա-
րա կերպով ցույց տվեց և ուսական սոց.-դեմ.
այժմ հաճախ ականատես և մասնակից պիտի
լինի կղերական և հակակղերական բուրժուազ-
այի կոնֆլիկտին: Յեթե մեր ընդհանուր խնդիրը
կայանում ե նրանում, վոր պրոլետարիատին

ոգնության գանձ կազմելու մի այնպիսի հատուկ դասակարգ, վորը կարողանա ինքզինքը բաժանել բուրժուական դեմոկրատիայից—ապա այդ խնդրի մեջ են մտնում, իբրև նրա մի մասնիկը, պրոպագանդի և ագիտացիայի բոլոր միջոցները, սրանց թվում նաև Դոմայի ամբիոնի ոգտագործումը, սոցիալիստական հակակղերականության և բուրժուական հակակղերականության միջև յեղած տարբերությունը մասսաներին լուսաբանելու համար:

Ոկտյաբրիստները և կադետները, III դոմայում դուրս գալով ծայրահեղ աջերի, կղերականների և կառավարության դեմ, մեր այդ խնդիրը չափազանց հեշտացրին. նրանք ակնառու ցուցաբերեցին բուրժուազիայի վերաբերմունքը դեպի յեկեղեցին ու կրոնը: Կադետների և այսպես կոչված պրոգրեսիստների լեզու մամուլը այժմ հատուկ ուշադրություն է դարձնում հնածեաների հարցի վրա, նա հետաքրքրվում է նույնպես այն հարցով, վոր ոկտյաբրիստները և կադետները միատեղ կառավարության դեմ արտահայտվեցին, վոր նրանք թեկուզ և փոքր չափով, հոկտեմբերի 17 ին խոստացած «բարենորոգումների ճանապարհի վրա յեն կանգնել»: Մեզ ավելի շուտ հարցի սկզբունքային կողմն է հետաքրքրում այսինքն՝ բուրժուազիայի ընդհանրա-

պես,—մինչև դեմոկրատ կոչումի հավակնությունն ունեցող կադետները,—վերաբերմունքը դեպի յեկեղեցին ու կրոնը: Մենք չպետք է թուլատրենք, վորպեսզի համեմատաբար մասնավոր բնույթ կրող հարցը—հնածեաների և տիրող յեկեղեցու միջի ընդհարումը, հնածեաների հետ կապված և մասամբ նույնիսկ ուղղակի ֆինանսական իմաստով նրանցից կախում ունեցող ոկտյաբրիստների վարմունքը (ասում են, վոր «Голос Москвы»-ն հնածեաների ծախքերով է հրատարակվում)—բուրժուազիայի՝ իբրև դասակարգի՝ քաղաքականության և շահերին վերաբերող արմատական հարցը քողարկե:

Նայեցեք կոմս Ուվարովի ճառին, վորը ոկտյաբրիստ է իր ուղղությամբ և դուրս է յեկել ոկտյաբրիստների ֆրակցիայից: Խոսելով ս.-դ. Սուրկովից հետո, նա անմիջապես հրաժարվում է հարցը այն սկզբունքային հողի վրա դնելուց, վորի վրա այդ հարցը դրեց բանվորական պատգամավորը: Ուվարովը միայն հարձակվում է սինոդի և ավագ-դատախազի վրա նրա համար, վոր նրանք յեկեղեցական վորոշ յեկամուտները և ծխական գումարները ծախսելու մասին Դոմային տեղեկություն չտրին: Նույն ձևով է դնում հարցը ոկտյաբրիստների պաշտոնական ներկայացուցիչ Կամենսկին (16 ապրիլի), վորը

«ուղղափառութիւնը ամրապնդելու տեսակետից» ծխի վերականգնումն է պահանջում: Այդ միտքը զարգացնում է այսպես կոչված «ձախ ոկտայաբրիստ» կապուստինը. «Յեթե մենք ուշադրութիւն դարձնենք ժողովրդի կյանքի վրա, — բացականչում է նա, — գյուղական բնակչութեան կյանքի վրա, ապա մենք այժմ ականատես կլինենք մի ցավալի յերևույթի. կրօնական կյանքը յերերում է, ժողովրդի բարոյական կարգերի խոշորագույն և միակ հիմունքը յերերման մեջ ե.., Ինչո՞վ փոխարինել խղճի հասկացողութիւնը, ի՞նչով փոխարինել խղճի ցուցմունքը: Չե՞ վոր, չի կարող լինել, վոր դա փոխարինվի դասակարգային պայքարի և այս կամ այն դասակարգի իրավունքների հասկացողութեամբ, Դա ցավազին հասկացողութիւնն է, վոր ներս է մտել մեր առորյա կյանքի մեջ: Այդպիսով, նկատի ունենալով այն տեսակետը, վոր կրօնը, իբրև բարոյական հիմունք, պետք է շարունակի իր գոյութիւնը և մատչելի դառնա ամբողջ ժողովրդի համար, հարկավոր է, վոր կրօնի քարոզիչները համապատասխան հեղինակութիւն վայելեն»...

Հակահեղափոխական բուրժուազիայի ներկայացուցիչը կամենում է կրօնը ամրապնդել, նա ցանկանում է մասսաների մեջ կրօնի ազդեցու-

թիւնը ամրապնդել, նա զգում է յեկեղեցու հեղինակութիւնը նսեմացնող ղեկավար դասակարգի, «փարաշավոր չինովսիկների» գործունեութեան թուլութիւնը, անպետքութիւնը և նույնիսկ փասակարութիւնը: Ոկտայաբրիստը կռվում է կղերական ծայրահեղութիւնների և վոստիկանական հովանավորութեան դեմ, վորպեսզի կրօնի ազդեցութիւնը մասսաների վրա խորացնի, վորպեսզի ժողովրդին շարժեցնող այն միջոցների դեմ վորոշ մասը, վոր մինչև որս յեղել են այնչափ կոպիտ, չափազանց անպետք, ծայր աստիճանի զառամյալ և աննպատակահարմար — ավելի կատարելագործված միջոցներով փոխարինի: Վոստիկանական կրօնն արդեն անբավարար է մասսաները հիմարացնելու համար, տվեք մեզ ավելի քաղաքակիրթ, վերածնված, ավելի ճկուն կրօն, վորն ընդունակ լինի ազդել ինքնավար ծխի վրա, — ահա, թե ինչ է պահանջում կապիտալը պետութիւնից:

Յե՛վ կաղետ կարաուլուֆն էլ ամբողջովին այդ նույն տեսակետի վրա յե կանգնած: Այդ լիբերալ» բնեգատը²⁸) (վորը «Народная Воля»-ից կերպարանափոխվելով հասել է աջ կաղետներին²⁹) աղմկում է «յեկեղեցու ապագազայնացման դեմ՝ ընդունելով, վոր նման պարագայում ժողովրդական մասսաները, հավատացյալները յեկեղեցու

շինարարական գործից հեռացվում են»։ Նա «սոսկալի» (բառացի այդպես) ե համարում այն, վոր մասսաներն «անհավատ» են դառնում։ Նա ճիշտ մենշևիկյան ձևով ճշում ե այն մասին, վոր «յեկեղեցու հսկայական ինքնարժեքը կորցնում ե իր գինը... ի մեծ վնաս վոչ միայն յեկեղեցական գործի, այլև՝ պետական գործի»։ Նա «վոսկի բառեր» ե անվանում մոլեռանդ Յեվլոզիյի զղվելի կեղծավորությունն այն առթիվ, վոր «յեկեղեցու խնդիրը հավիտենական ե, անխախտելի, և ուստի՝ յեկեղեցին քաղաքականության հետ անհնար ե կապել»։ Նա յեկեղեցու և սև հարյուրակի միության դեմ բողոքում ե այն նպատակով, վորպեսզի յեկեղեցին, Քրիստոսի սիրո և ազատության գաղափարի վոգով տոգորված, իր սրբազնագույն գործը կատարի «ավելի մեծ թափով ու փառքով, քան մինչև որս կատարել ե»։

Ընկեր Բելաուսովը շատ լավ արեց, վոր Դոմայի ամբիոնից ծաղրեց կարաուլովի այդ «լիրիք» խոսքերը։ Բայց նման ծաղրանքը տակավին դեռ շատ քիչ ե։ Հարկավոր եր լուսաբանել, — և առաջին հարմար առիթին դոմայի ամբիոնից պետք ե լուսաբանել, — վոր կաղետների տեսակետը միանգամայն նմանում ե ոկտյաբրիստների տեսակետին և վոր նա արտահայտում ե կուլտուրական կապիտալի ձգտումը՝ կազմակեր-

պել կրոնական արբեցումով ժողովրդին հիմարացնելը յեկեղեցական խաբուության ավելինըրբագույն միջոցներով, քան հնում ապրած ուս սոսկական «տերհայրն» ե գործադրել։

Ժողովրդին հոգեկան ստրկության մեջ պահելու համար հարկավոր ե սերտ կապ ստեղծել յեկեղեցու և սև հարյուրակի միջև, — առում եր Պուրշիկևիչի⁸⁰ բերանով բռի կալվածատերը և հին բռնակալը (դերժիմորդան)։ Սխալվում եք, պ. պ., առարկում ե նրանց հակահեղափոխական բուրժուազիան կարաուլովի բերանով. այդ միջոցներով դուք ժողովրդին կրոնից միայն վերջնականապես կհեռացնեք։ Յեկեք ավելի խելացի, խորամանկ և վարպետորեն գործենք, — հեռացնենք չափազանց սխմար և կոպիտ սև հարյուրակայինին, «յեկեղեցու ապաազգայնացման» դեմ պայքար հայտարարենք, դրոշակի վրա գրենք Յեվլոզիյ յեպիսկոպոսի այն «վոսկե բառերը» — «թե յեկեղեցին բարձր ե քաղաքականությունից, և, միայն գործունեության այդպիսի յեղանակի դեպքում, մենք հնարավորություն կունենանք շշմեցնելու գոնե հետամնաց բանվորների գեթ մի մասը և հատկապես քաղքենիներին ու գյուղացիներին. այդ դեպքում միայն մենք ոգնած կլինենք վերանորոգված յեկեղեցուն իր «մեծ սուրբ գործը» կատարելու, — ժողովրդական մասսա-

ների մեջ հոգեվոր ստրկութիւնը պահպանելու:

Մեր լիբերալ մամուլը մինչև «Рев» թերթը, վերջին ժամանակներս խստիվ պարսավում է Ստրուվեյին³¹⁾ և ընկ. վորպես «Вехи»³²⁾ ժողովածուի հեղինակների: Բայց կաղետների կուսակցութեան պաշտոնական հոետոր Կարաուլովը Պետական Դումայում սքանչելի ձևով մերկացրեց Ստրուվեյին և ընկ. ուղղած պարսավումներին նրանից հրաժարվելու գարշելի կեղծավորութիւնը: Այն, ինչ Կարաուլովի և Միլյուկովի³³⁾ մտքի մեջ է, այդ Ստրուվեյի լեզվի վրա է գրանվում: Լիբերալները Ստրուվեյին պարսավում են միայն նրա համար, վոր նա անզգուշաբար ճշմարտութիւնը բերնից թուցրեց և վոր նա չափազանց անվախ բացեց կարտերը: Լիբերալները, կշտամբելով «Вехи»-ն և շարունակելով կաղետական կուսակցութիւնը պաշտպանել, ժողովրդին անխղճորեն խաբում են. նրանք դատապարտում են անզգուշ, անկեղծ խոսքը, բայց շարունակում են նույն գործը, վորը համապատասխանում է այդ խոսքին:

Տրուդավիկների³⁴⁾ Դումայում քննվող հարցերի շուրջը յեղած վեճերի ընթացքում ունեցած դիրքի մասին շատ բան չունենք ասելու: Ինչպես և միշտ, այս անգամ ել տրուդավիկ

գլուղացիների և տրուդավիկ-ինտելիգենտների միջև գոյութիւն ունեցող տարբերութիւնը պայծառ ձևով յերեւան յեկավ, վոր այնքան ել ցանկալի չիւր վերջիններիս համար, քանի վոր նրանք մեծ պատրաստակամութեամբ կաղետներին հետևել են կամենում: Գլուղացի Ռոժկովը, ճիշտ է, իր ձառով իր ամբողջ քաղաքական անգիտակցութիւնը մերկացրեց, նա ևս կրկնեց կաղետների գոեհիկ միտքն այն մասին, թե ուս ժողովրդի միութիւնը վոչ թե ամրապնդում, այլ քայքայում է հավատը. նա այս կամ այն ծրագիր առաջագրել չկարողացավ: Սակայն դրա փոխարեն, յերբ նա միամտորեն սկսեց պատմել մերկ, չգունավորած ճշմարտութիւնը հոգեորականութեան ջգլումների, տերտերների քումահաճույքների մասին, սկսեց պատմել, վոր նրանք պսակի համար փողից բացի պահանջում են՝ «մի շիշ ողի, ուտելեղեն և մի ֆունտ թեյ, իսկ յերբեմն ել պահանջում են այնպիսի բան, վոր ամբիոնից վախենում եմ ասել» (16 ապրիլի սղագիր հաշվետվութեան 2259 յերես),—սև հարյուրակային Դուման ել չհամբերեց, վայրի ադմուկ բարձրացավ աջակողմյան նստարանների վրա: «Սա ի՞նչ ծաղրանք է»: «Ի՞նչ խայտառակութիւն է դա»,—աղաղակեցին սև հարյուրակայինները՝ զգալով, վոր մուժիկի հասարակ ճա-

որ անորինական տուրքերի և ծխակատարութեան համար պահանջվող «սակագնի» մասին՝ ավելի մեծ չափերով ե հեղափոխականացնում մասսաները, քան ամեն տեսակի թեորյական կամ տակտիքական հակակրոնական հայտարարութիւնները: Յե՛վ վայրի ցուլերի վոնմակը, վոր միապետութեան շահերի պաշտպան ե հանդիսանում III Դոմալում, իր լակեյին—նախագահ Մեյենդորֆին վախեցրեց ու նրան հարկադրեց Ռոժկովին խոսքից զրկել (ս. դ., վորոնց միացան մի քանի տրուզավիկներ, կազեաներ և ուրիշները նախագահի նման վարմունքի դեմ բողոք ներկայացրին):

Տրուզավիկ գյուղացի Ռոժկովի ճառը, չընայած իր չափազանց տարրականութեան, սքանչելի կերպով ցույց տվեց այն անդունդը, վոր գոյութիւն ունի կազեաների՝ կրոնի կեղծավոր ու մտածված հետադեմ պաշտպանութեան, և այն մոժիկի պրիմիտիվ, անգիտակից ու հնամուկ կրոնականութեան միջև, վորի մեջ նրա կյանքի պայմանները—հակառակ նրա կամքի և անկախ նրա գիտակցութիւնից—իսկական հեղափոխական դառնութիւն են առաջացնում անորինական հարկերի դեմ և միջնադարյան կարգերի խորտակման գործի վճռական պայքարը նախապատրաստում: Կազեաները—ներկայացուցիչներ են հակահեղափոխական բուրժուազիայի, վորը

կամենում ե կրոնը վերանորոգել և ամրապնդել ընդեմ ժողովրդի: Ռոժկովըրը—ներկայացուցիչներ են հեղափոխական բուրժուական դեմոկրատիայի, վորը անզարգացած, անգիտակից ե, ընկճված, ինքնուրույնութիւնից զուրկ, բաժանբաժան յեղած, բայց իր ներսում թագցրած ե հեղափոխական յեռանդի տակավին չսպառված պաշար՝ կալվածատերերի, տերտերների, և միապետութեան դեմ պայքարելու համար:

Ինտելիգենտ տրուզավիկ Ռոզանովը կազեաներին մոտենում եր ավելի պակաս անգիտակցութեամբ, քան Ռոժկովը: Ռոզանովը կարողացավ յեկեղեցին պետութիւնից անջատելու մասին խոսել իբրև «ճախերի» պահանջի, սակայն նա ինքզինքը գապեց գործածել հետադիմական քաղբենի ֆրազներ այն մասին, վոր «ընտրական որենքը պետք ե փոփոխութեան յեն թարկել այն ուղղութեամբ, վորպեսզի հոգևորականութիւնը հեռու կանգնի քաղաքական պայքարին մասնակցելուց»: Հեղափոխական այն վոզին, վոր ինքնիրեն պոռթքում ե տիպիկ միջակ մոժիկի մեջ, յերբ նա ճշտութեամբ պատմում ե իր նիստ ու կացը, միանգամայն անհետանում ե ինտելիգենտ տրուզավիկի մոտ և փոխարինվում ե նրա անորոշ, իսկ յերբեմն ել ուղղակի գարշելի ֆրազով. հարյուրյերորդ և հազարյերորդ անգամ մենք ականատես

ենք այն ճշմարտութեան ապացույցին, վոր ոռւս
գյուղացիական մասսաները պրոլետարիատին հե-
տեվելով միայն ընդունակ կլինեն տապալել հողա-
տեր-ճորտատերերի, փարաշավոր ճորտատերերի
և միապետական ճորտատերերի ճնշող ու կործա-
նիչ լուծը:

Բանվորական կուսակցութեան և բանվոր դա-
սակարգի ներկայացուցիչ սոց.-դեմ. Սուրկովը
միակն եր ամբողջ Գումայում, վորը վեճերն
խսկահապես սկզբունքային բարձրութեան վրա
դրեց և առանց ծածկամտութեան հայտարարեց
այն մասին, թե ինչպես ե վերաբերվում դեպի
յեկեղեցին ու կրոնը պրոլետարիատը և ինչպես
դեպի այն պէ՞ք ե վերաբերվի հետեվողական
ու կենսունակ ամբողջ դեմոկրատիան: «Կրոնը
ոպիում ե ժողովրդի համար»... «ժողովրդական
գումարներից վոչ մի գրոշ չպետք ե տալ ժողո-
վրդի գիտակցութեանը մթազնոզ, նրա արնա-
խում թշնամիներին», — սոցիալիստի այդ անվախ,
համարձակ աշխարհ ուղղական կոչը հնչից, իբ-
րև սև հարյուրակային Գումային ուղղված մար-
տահշավեր և արձագանք գտավ մի իոնավոր պրո-
լետարների մեջ, վորոնք այն կտարածեն մաս-
սայերի շրջանում և կարող-կլինեն, յերբ ժա-
մանակը հասնի, այդ կոչը հեղափոխական գոր-
ծողութեան վերածել:

ՄԱՐՏԵՉՈՂ ՄԱՏԵՐՅԱԼԻՉՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

«Մարքսիզմի դրոշակի տակ» հանդեսի ընդ-
հանուր խնդիրների մասին № 1—2 մեջ ընկ-
Տրոցկին արդեն ասել ե եյականը և ասել ե
սքանչելի ձևով: Յես կուզենայի միայն կանգ
առնել մի քանի հարցելի վրա, վորոնք ա-
վելի մոտիկից են վորոշում այն աշխատանքի
բովանդակութունն ու ծրագիրը, վոր խմբագ-
րութեանը ազգարարել ե հանդեսի № 1—2 նե-
րածական հայտարարութեան մեջ:

Այդ հայտարարութեան մեջ ասված ե, վոր
«Մարքսիզմի դրոշակի տակ» հանդեսի շուրջը
համախմբված անձնավորութեաններից վոչ բո-
լորն են կոմունիստներ, բայց բոլորը հետե-
վողական մատերիալիստներ են: Կարծում եմ,
վոր կոմունիստների և վոչ-կոմունիստների նման
միութեանը անպայման անհրաժեշտութեան ե
հանդիսանում և ճիշտ ձևով ե վորոշում հանդե-
սի խնդիրները: Կոմունիստների, ինչպես և ընդ-
հանրապես այն հեղափոխականների, վորոնք մեծ
հեղափոխութեան սկիզբը հաջողութեամբ դրին,

ամենախոշոր և վտանգավոր սխալներէց մեկը այն պատկերացումն է, թե միմիայն հեղափոխականների ձեռքերով հեղափոխութիւն կարելի յէ կատարել: Ընդհակառակը, յուրաքանչյուր լուրջ աշխատանքի հաջողութեան տեսակետից անհրաժեշտ է հասկանալ և կյանքի մեջ կիրառել այն, վոր հեղափոխականներն ընդունակ են դեր խաղալ, լոկ վորպես հիրավի կենսունակ և առաջավոր դասակարգի առաջապահը: Առաջապահն այն դեպքում միայն հնարավորութիւն կունենա կատարելու առաջապահի խնդիրները, յեթե նա կարողանա չկտրվել իր դեկավարութեան ներքո գտնվող մասսայից, այլ իրապես ամբողջ մասսային առաջ տանի: Կոմունիստական շինարարութեան վորևէ հաջող աշխատանքի մասին խոսք անգամ չի կարող լինել, յեթե գործունեութեան զանազան բնագավառներում վոչ-կոմունիստները հետ միութիւն չլինի:

Իս վերաբերում է մատերիալիզմի և մարքսիզմի պաշտպանութեան այն աշխատանքին, վորին «Մարքսիզմի դրոշակի տակ» հանդեսը ձեռնամուխ է յեղել: Ռուսաստանի առաջավոր հասարական մտքի գլխավոր ուղղութիւնները, բարեբախտաբար, նշանավոր չափով մատերիալիստական ավանդութիւն ունեն: Ել չխոսելով Գ. Վ. Պլեխանովի³⁵) մասին, բավական է հիշատակել

Չերնիշևսկուն³⁶), վորից ժամանակակից նարող-նիկները (ժողովրդական սոցիալիստները, սոց.-հեղափոխականները և այլն) հետ են մնացել՝ հաճախ նորաձև հետադիմական փիլիսոփայական ուսմունքի յետևից ընկնելու շնորհիվ, յեվրոպական գիտութեան իբր թե «վերջին խոսքին» արտաքին խաբուսիկ փայլին յենթարկվելով և չկարողանալով ընբռնել, վոր այդ խաբուսիկ փայլի տակ բուրժուազիային, նրա նախապաշարունակների և բուրժուական հետադիմութեանը սպասաւորելու այս կամ այն այլակերպութիւնն է թաքնված:

Համենայն դեպս, մեղանում՝ Ռուսաստանում դեռևս գոյութիւն ունին և բավականին յերկար ժամանակ, անկասկած, կլինեն մատերիալիստներ վոչ-կոմունիստների բանակից, և մեր պարտականութիւնն է հետևողական ու մարտնչող մատերիալիզմի բոլոր կողմնակիցներին՝ այսպես կոչված «լուսավոր հասարակութեանը» փիլիսոփայական հետադիմութեան և փիլիսոփայական նախապաշարմունքների դեմ մղվող պայքարի մեջ անպայման միատեղ աշխատանքի քաջել: Ինչգեւն—հայրը³⁷), վորին չպետք է շփոթել իր, —նույնքան պահանջկոտ, վորքան և անաջողակ գրականագետ, —վորդու հետ, ճիշտ տեղին և պարզ կերպով արտահայտեց մարքսիզմի հիմ-

նական տեսակետը բուրժուական յերկրներում տիրապետող և նրանց գիտնականների ու հրապարակախոսների շրջանում ուշադրութան արժանացած փիլիսոփայական ուղղութիւնների մասին, ասելով, վոր ժամանակակից հասարակարգում փիլիսոփայութեան պրոֆեսսորները մեծ մասամբ իրապես իրենցից ներկայացնում են վոչ այլ ինչ, քան «կղերականութեան դիպլոմավոր լակեյներ»:

Մեր ռուսական ինտելիգենտները, վոր սիրում են իրենց առաջավոր համարել, ինչպես, ի դեպ, նրանց յեղբայրակիցները մյուս բոլոր յերկրներում, բոլորովին չեն սիրում հարցը տեղափոխել զնահատութեան այն շրջանը, վոր արված է Պիցգենի խոսքերով: Բայց նրանք այդ չեն սիրում այն պատճառով, վոր ճշմարտութիւնը աչք է ծակում: Բավական է քիչ թե շատ թափանցել ժամանակակից կլթված մարդկանց՝ տիրապետող բուրժուազիայից ունեցած պետական, ապա ընդհանուր—տնտեսական, ապա կենցաղային ու այլ տեսակի կախման մեջ,— վորպեսզի հասկանալ Պիցգենի խիստ բնորոշումի բացարձակ ճշտութիւնը: Բավական է վերհիշել այն նորածե փիլիսոփայութեան ուղղութիւնների ճնշող մեծամասնութիւնը, վոր այդքան հաճախ ծագում են յեվրոպական յեր-

կրներում, — սկսած հենց այն ուղղութիւններից, վոր կապված էյին ռադիոյի հայտնագործման հետ, և վերջացրած նրանցով, վոր այժմ՝ ձրգտում են Եյնշտեյնի պոչից բռնել, — վորպեսզի պատկերացնել բուրժուազիայի դասակարգային շահերի և դասակարգային դիրքի միջև գոյութիւն ունեցող կապը, վորպեսզի պատկերացնել բուրժուազիայի կողմից պաշտպանվող բոլոր ձևի կրոնների և նորածե փիլիսոփայական ուղղութիւնների գաղափարական բովանդակութեան միջև գոյութիւն ունեցող կապը:

Վերևում ասածից յերևում է, վոր այն հանդեսը, վորն ուղում է մարտնչող մատերիալիզմի որդանը լինել, պետք է ռազմական որդան հանդիսանա, նախ՝ ժամանակակից «կղերականութեան» բոլոր դիպլոմավոր լակեյներին անշեղ կերպով մերկացնելու և հալածելու իմաստով՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք իբրև պաշտոնական գիտութեան ներկայացուցիչներ կամ վորպես ազատ հրացանաձիգներ են հանդես գալիս, կամ թե իրենց «գեմոկրատիկ ձախեր կամ գաղափարական-սոցիալիստական հրասլաբակախոսներ» են համարում:

Յերկրորդ՝ այդպիսի մի հանդես պետք է լինի մարտնչող աթեիզմի որդանը: Մեզ մոտ կան գերատեսչութիւններ կամ համեմայն դեպս այն-

պիսի պետական հիմնարկութիւններ, վորոնք այդ աշխատանքը տանում են: Բայց այդ աշխատանքը տարվում է չափազանց դանդաղ, ծայր աստիճան անբավարար ձևով, ըստ յերևույթին, իր վրա կրելով մեր իսկական ռուսական (թեպետ և խորհրդային) բյուրոկրատիզմի ընդհանուր պայմանները լուծը: Ուստի, համապատասխան պետական հիմնարկութիւնները աշխատանքը լրացնելու, այն ուղղելու և նրան ավելի աշխուժութիւն տալու նպատակով, չափազանց կարևոր է, վորպեսզի հանդեսը, վոր ինքզինքը նվիրում է մարանչոյ մատերիալիզմի որդան լինելու խնդրին, աթեիստական անխոնջ պրոպագանդ և պայքար մղի: Պետք է ուշիմությամբ հետևել բոլոր լեզուներով գրված համապատասխան գրականութեան և թարգմանութեան կամ, հակառակ դեպքում, փոխադրութեան միջոցով տալ այն ամենը, ինչ վոր այս կամ այն չափով ոգտակար կարող է լինել այդ բնագավառում:

Ենգելսը ժամանակակից պրոլետարիատի դեկավարներին վաղուց խորհուրդ է տվել 18-րդ դարի վերջի ռազմական աթեիզմի գրականութիւնը թարգմանել և ժողովրդի մեջ մասսայորեն տարածել: Ի մեծ ամոթ մեզ, մենք այդ մինչև որս չենք կատարել (սա մեկն է այն բանի բազմաթիւ ապացույցներից, վոր հե-

դափոխութեան դարաշրջանում իշխանութիւնը նվաճել ավելի հեշտ է, քան այդ իշխանութիւնից ճիշտ կերպով ոգտվել): Յերբեմն մեր այդ դանդաղկոտութիւնը, անգործունեութիւնը, անկարողութիւնը արդարացնում են ամեն տեսակ «վսեմ» նկատառումներով. որինակ, «Իբր թե, 18-րդ դարի աթեիստական գրականութիւնը հնացել է, գիտական չէ, նախվ է» և այլն: Վոչ մի բան այնքան վատ չէ, քան այսպես կոչված գիտական սովետութիւնները, վոր կամ բծախնդրութիւնն են ծածկում, կամ ել մարքսիզմի լիակատար անըմբռնումը: Հարկավ, 18-րդ դարի հեղափոխականների աթեիստական աշխատութիւնների մեջ վոչ գիտական և նախվ տեղեր քիչ չափով չեն: Բայց վոչ վոք չի արգելում այդ աշխատութիւնների հրատարակիչներին կրճատումներ կատարել և համառոտ վերջաբաններ կցել, և դրանց միջոցով ցույց տալ կրոնի գիտական քննադատութեան այն առաջխաղացումը, վոր կատարել է մարդկութիւնը 18-րդ դարի վերջից սկսած, մատնանշել համապատասխան նորագույն գրքավածքները և այլն: Մարքսիստի համար խոշորագույն և վատթար սխալ կլինել կարծել, վոր բազմամիլիոն ժողովրդական (հատկապես գյուղացիական և արհեստավորական) մասսաները,

վոր ժամանակակից բոլոր հասարակակարգերի կողմից դատապարտված են խավարի, սգիտութեան և նախապաշարունակների—այդ խավարի մեջից կարող են դուրս գալ միայն զուտ մարքսիստական լուսավորութեան ուղիղ ճանապարհով: Այդ մասսաներին անհրաժեշտ է տալ անթեխտական պրոպագանդի վերաբերմամբ ամենաալագան նյութեր, նրանց պետք է ծանոթացնել կյանքի ամենատարբեր բնագավառներից վերցրած փաստերին, ամեն կերպ պետք է աշխատել նրանց մոտենալ՝ և այսպես և այնպես, վորպեսզի նրանց շահագրգռել, կրօնական նիրհից արթնացնել, ամենատարբեր յեղանակներով թափ տալ նրանց բոլոր կողմերից և այլն:

18-րդ դարի հին աթեիստների խիզախ, կենդանի, տաղանդավոր, սրամիտ հրապարակախոսությունը, վոր բացահայտ հարձակում է գործում տիրապետող կղերականութեան վրա, հաճախ հազար անգամ ավելի նպատակահարմար կհանդիսանա մարդկությունը կրօնական նիրհից արթնացնելու համար, քան տաղտկալի, չոր ու ցամաք, գրեթե վոչ մի հաջող փաստով չբացատկերավորված մարքսիզմի այն վերապատմությունները, վորոնք գերիշխում են մեր գրականութեան մեջ և (մեղքներս չպիտի թագցնենք)

հաճախ մարքսիզմն աղավաղում են: Մարքսի և Ենգելսի բոլոր փոքր իշատ է խոշոր աշխատությունները մեղնում թարգմանվել են: Վախենալ, վոր հին աթեիզմը և հին մատերիալիզմը մեղնում թերիկման այն ուղղումներից, վոր Մարքսն ու Ենգելսն մտցրել են, բացարձակապես վոչ մի հիմք չկա: Ամենակարևորն այն է, — և մեր, իբր թե մարքսիստական, բայց եյապես մարքսիզմն աղավաղող կոմունիստները ամենից շուտ հենց այդ բանն են մոռանում,—վոր մենք մեր տակավին չզարգացած մասսաները գիտակից վերաբերմունքով դեպի կրօնական հարցերը և կրօնների լուրջ քննադատութեամբ կարողանանք շահագրգռել:

Մյուս կողմից, նայեք կրօնների արդի գիտական քննադատութեան ներկայացուցիչների վրա: Կրթված բուրժուազիայի այդ ներկայացուցիչները, գրեթե միշտ, իրենց իսկ սեփական կրօնական նախապաշարունակների հերքումը «լրացնում են» այնպիսի դատողություններով, վորոնք իսկույն և եթ նրանց մերկացնում են, վորպես բուրժուազիայի գաղափարական ստրուկներ, վորպես «կղերականութեան դիպլոմավոր լակեյներ»:

Վերցնենք յերկու որինակ: Պրոֆ. Ռ. Յու. Վիպերը 1918 թվին հրատարակել է իր «Քրիստոսի

տոնեյության ծագումը» գրքույկը (Մոսկվա, հրատարակութիւն «Փարոս»-ի): Վերապատմելով ժամանակակից գիտութեան գլխավոր արդյունքները, հեղինակը վոչ միայն չի կուլում այն նախապաշարումների և խաբեյության դեմ, վորոնք յեկեղեցու, վորպես քաղաքական կազմակերպութեան, զենք են հանդիսանում, վոչ միայն լուությամբ ե անցնում այդ հարցերի վրայով, այլ և ուղղակի, ծիծաղաշարժ և ծայր աստիճան հետադեմ պահանջկոտութեամբ հայտարարում ե բարձր կանգնել յերկու՝ իդեյալիստական և մատերալիստական — «ծայրահեղութիւններից»: Դա նշանակում ե սպասավորել տիրապետող բուրժուազիային, վորն ամբողջ աշխարհում կրոնի պաշտպանութեան գործի վրա ծախսում ե հայուերավոր միլիոն ուրբիներ, վոր աշխատավորութեան քրտնքից ե մզում:

Գերմանացի հայտնի գիտնական Արտուր Կրեվսը, իր «Առասպել Քրիստոսի մասին» գրքի մեջ կրոնական նախապաշարումները և հեքյաթներն հերքելով, և ապացուցելով, վոր Քրիստոսը գոյութիւն չի ունեցել, գրքի վերջում պաշտպանում ե վերածնված, վերամաքրված, նրբացած նոր կրոնը, վորն ընդունակ կլինի դեմ առ դեմ կանգնել «որից որ ավելի ու ավելի ուժեղացող նատուրալիստական հոսանքին» (եջ 238, գերմա-

ներեն 4-րդ հրատարակութիւն, 1910 թ.): Դա բացորոշ, գիտակից մի յետադիմական ե, վոր ամաշկարա շահագործողներին ոգնում ե՝ հին, փաած կրոնական նախապաշարումները փոխարինելու ավելի թարմ, դեռ ել ավելի զգվելի ու ստոր նախապաշարումներով:

Սակայն այդ դեռ չի նշանակում, վոր Կրեվսը թարգմանելու հարկ չկա: Դա նշանակում ե, վոր կոմունիստները և բոլոր հեռեդղական մատերալիստները բուրժուազիայի առաջագեմ մասի հետ վորոշ չափով միութիւն կնքելով հանդերձ՝ պետք ե անվերջ մերկացնեն նրան, յերբ նա հետադիմական ե դառնում: Դա նշանակում ե խուսափել 18-րդ դարի բուրժուազիայի ներկայացուցիչների հետ միութիւն կազմելուց, այսինքն խորշել մի դարաշրջանից, վորի ընթացքում բուրժուազիան հեղափոխական եր. նշանակում ե մարքսիզմին և մատերալիզմին դավաճանել, վորովհետեւ Կրեվսների հետ այս կամ այն ձևի, այս կամ այն չափով «միութիւն» կնքելը մեզ համար պարտադիր ե տիրապետող կրոնական խավարամոլութիւնների դեմ պայքարելու համար:

«Մարքսիզմի դրոշակի տակ» հանդեսը, վոր կամենում ե մարանչող մատերալիզմի որդանը լինել, պետք ե մեծ տեղ տա աթեիզմի պրոպա-

զանդին, համապատասխան գրականության տեսության և այդ ասպարեզում մեր պետական աշխատանքի խոշոր պակասություններն ուղղելուն: Առանձնապես կարևոր է ոգտագործել այն գրքերը և բրոշյուրները, վորոնք իրենց մեջ մեծ չափով պարունակում են այնպիսի կոնկրետ փաստեր և բաղդատություններ, վորոնք ցույց են տալիս ժամանակակից բուրժուազիայի դասակարգային կազմակերպությունների ու դասակարգային շահերի կապը կրոնական հիմնարկների և կրոնի պրոպագանդի հետ:

Ձափազանց կարևոր են այն բոլոր նյութերը, վոր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին են վերաբերվում. այդտեղ կրոնի և կապիտալի պաշտոնական, պետական կապը ավելի թույլ չափով է արտահայտվում: Սակայն, զբափոխարեն, մեզ համար ավելի պարզ է դառնում, վոր այսպես կոչված «ժամանակակից դեմոկրատիան» (վորի հանդեպ անմտորեն գլուխ են ջարդում մենշևիկները, սոց.-հեղ., իսկ մասամբ անարխիստները և այլն) վոչ այլ ինչ է, քան մի ազատութուն՝ քարոզելու այն, ինչ վոր բուրժուազիային յե ձեռնտու, իսկ նրան ձեռնտու յե քարոզել՝ ամենահետադեմ գաղափարներ, կրոն, խավարամուլութուն, շահագործողների պաշտպանութուն և այլն:

Կուզենայի հուսալ, վոր այն հանդեսը, վորն ուղղում է մարտնչող մատերիալիզմի որդանը լինել, մեր ընթերցող հասարակությանը կտա աթեիստական գրականության տեսությունները՝ բնորոշելով, թե ընթերցողների ինչ շրջանի համար և ինչ իմաստով կարող էյին հարմար լինել այս կամ այն աշխատությունները, թե ինչ է լույս տեսել մեզանում, (լույս տեսած պետք է համարել միայն տանելի թարգմանությունները, իսկ այդպիսիներն այնքան ել շատ չեն), և ինչ պետք է դեռ հրատարակվի:

Կուժունիստների կուսակցության չպատկանող հետևողական մատերիալիստների հետ միութուն հաստատելուց բացի, վոչ պակաս, յեթե վոչ ավել չափով, մարտնչող մատերիալիզմի աշխատանքի տեսակետից անհրաժեշտ է միութուն հաստատել նաև ժամանակակից բնագիտության այն ներկայացուցիչների հետ, վորոնք հակումն ունեն դեպի մատերիալիզմը և չեն վախենում այդ մատերիալիզմը պաշտպանելուց և քարոզելուց ընդդեմ այսպես կոչված «քաղաքակիրթ հասարակակարգի» մեջ իշխող՝ դեպի իդեյալիզմ և սկեպտիցիզմ հարող, նորածև փիլիսոփայական տարուբերումների:

«Մարքսիզմի զրոշակի տակ» հանդեսի համար 1—2-ի մեջ գետեղված Ա. Տիմիրյազևի

հոգւածը Եյնշտեյնի հարաբերականութեան թեորի-
այի մասին: Թույլ ե տալիս հուսալ, վոր հանդե-
սին կհաջողվի իրագործել նաև այդ յերկրորդ մի-
ությունը: Պետք ե այդ հանգամանքի վրա ա-
վելի մեծ ուշադրութիւն դարձնել: Պետք ե հիշել,
վոր հենց արդի բնագիտութեան մեջ կատարվող
սուր բեկումից ե, վոր հաճախ ծնվում են յե-
տագեմ փիլիսոփայական դպրոցներ և դպրոցիկ-
ներ, ուղղութիւններ և ուղղութիւնիկներ: Ուս-
տի՝ հետևել այն հարցերին, վոր նորագույն հե-
ղափոխութիւնը առաջադրում ե բնագիտութեան
ասպարեզում և փիլիսոփայական հանդեսի մեջ,
այդ աշխատանքին մասնակից դարձնել բնագետ-
ներին,— դա մի խնդիր ե, առանց վորի լուծման
մարտնչող մատերալիզմը վոչ մի դեպքում չի
կարող լինել վո՛չ մարտնչող, վո՛չ ել մատերիա-
լիստական: Յեթե Տիմիրյազևը հանդեսի թերթի
առաջին համարի մեջ հարկադրված ե նախորդ
բացատրութիւն տալու, թե Եյնշտեյնը անհա-
տապես Տիմիրյազևի խոսքերով, մատերալիզմի
հիմքերի դեմ վոչ մի ակտիվ արշավանք չի կա-
տարում, բայց նրա թեորիայի պոչից արդեն
պինդ բռնել ե բոլոր յերկրների բուրժուական
ինտելիգենցիայի ներկայացուցիչների ստվար
բազմութիւնը, ապա այդ մենակ Եյնշտեյնին
չի վերաբերում, այլ 19-րդ դարի վերջերից սկսած

մի շարք բնագետների, յեթե վոչ բնագիտութեան
նշանավոր վերանորոգիչների մեծամասնութեան:

Յեվ վորպեսզի նման յերևութիւններին անդի-
տակցաբար չվերաբերվենք, մենք պիտի հասկա-
նանք, վոր առանց լուրջ փիլիսոփայական հիմ-
նավորման վոչ մի բնական գիտութիւն, վոչ մի
մատերալիզմ չի կարող դիմանալ բուրժուական
գաղափարների և բուրժուական աշխարհայացքի
վերականգնման դեմ տարվող պայքարի թափին:
Այդ պայքարին դիմանալու և այն մինչև վերջ
լրիվ հաջողութեամբ տանելու համար, բնագետը
ժամանակակից մատերիալիստ պիտի լինի, գի-
տակցական կողմնակից պիտի լինի այն մատեր-
իալիզմի, վոր Մարքսն ե տվել, այսինքն պետք
ե զիալեկտիկ մատերիալիստ լինի: Այդ նպա-
տակին հասնելու համար «Մարքսիզմի դրոշակի
տակ» հանդեսի աշխատակիցները պետք ե Հե-
գելի զիալեկտիկայի սիստեմատիկական ուսում-
նասիրութիւն կազմակերպեն՝ մատերիալիստա-
կան տեսակետից: Նրանք պետք ե ուսումնասիրեն
այն զիալեկտիկան, վոր Մարքսը գործնականապես
կիրառեց թե իր «Կապիտալի» և թե իր պատ-
մական ու քաղաքական աշխատութիւնների մեջ,
և կիրառեց այնպես հաջող, վոր այժմ Արևել-
քում (Ճապոնիա, Հնդկաստան, Չինաստան) կյան-
քի և պայքարի կոչված այն նոր դասակարգերի

այսինքն մարդկութեան այն հարյուրավոր միլիոններէ արթնացման որը, վորոնք աշխարհի ազգաբնակչութեան մեծ մասն են կազմում և վորոնք իրենց պատմական անգործունեյությամբ և պատմական նիրհով մինչև որս Յեվրոպայի առաջավոր պետութիւններէից շատերում ճանճացում և նեխվածութիւն են պայմանավորել, — կյանքի կոչված այդ նոր ժողովուրդներէ և դասակարգերի արթնացման որը ավելի ու ավելի յէ հաստատում մարքսիզմը:

Անշուշտ, Հեգելյան դիալեկտիկայի այդպիսի ուսումնասիրութեան հետազոտութեան և պրոպագանդի աշխատանքը չափազանց դժվարին է և, անկասկած, առաջին փորձերն այդ ուղղութեամբ կապված պիտի լինեն սխալների հետ: Բայց չի սխալվում միայն նա, ով վոչինչ չի անում: Հիմնվելով այն բանի վրա, թե ինչպես Մարքսը ոգտագործեց Հեգելի մատերիալիստորեն հասկացված դիալեկտիկան, մենք կարող ենք և պարտավոր ենք այդ դիալեկտիկան բոլոր կողմերից ուսումնասիրել, հանդեսի մեջ տպագրել Հեգելի³⁸) գլխավոր աշխատութիւններէից հատվածներ, մեկնաբանել նրանց մատերիալիստորեն, լուսաբանելով դիալեկտիկայի կիրարկման որինակներով վերցրած Մարքսի գրվածքներից. նաև դիալեկտիկայի տնտեսա-քաղաքական հարաբե-

րութիւններէ շրջանից վերցրած այն նմուշներով, վոր նորագույն պատմութիւնը և առանձնապես ժամանակակից իմպերիալիստական պատերազմը և հեղափոխութիւնը տալիս են արտասովոր մեծ քանակութեամբ: «Մարքսիզմի դրոշակի տակ» հանդեսի խմբագիրներէ և աշխատակիցների խումբը իմ տեսակետով, պետք է լինի իր տեսակի «Հեգելյան դիալեկտիկայի մատերիալիստական բարեկամների մի ընկերութիւն»): Ժամանակակից բնագետները Հեգելի մատերիալիստական դիալեկտիկայի մեկնաբանութեան մեջ կարող են գտնել (յեթե փնտրել կարողանան և յեթե մենք նրանց ոգնել սովորենք) բոլոր այն փիլիսոփայական հարցերի մասին մի շարք պատասխաններ, վոր հեղափոխութիւնը դնում է բնագիտութեան բնագավառում և վորոնց հիման վրա «խունվում են» խմբագրութեան մեջ բուրժուական նորաձևութեան յերկրպագու ինտելիգենտները:

Մատերիալիզմը մարտնչող մատերիալիզմ չի կարող լինել, յեթե նա իր առաջ չդնի նման խնդիրների սխտեմատիկ իրագործումը: Նա ավելի շուտ կլինի վոչ թե, ըստ շչեդրինյան արտահայտութեան, հարվածող, այլ հարվածվող: Առանց դրան նշանավոր բնագետները նույնպես հաճախ, ինչպես մինչև որս, անձար պետք է

լինեն իրենց փիլիսոփայական յեզրակացությունների և ընդհանրացումների մեջ, վորովհետև բնագիտությունը այնքան արագ բայլերով և առաջընթացում, նա այնպիսի հեղափոխական խորը փոփոխություններ շրջան և ապրում իր բոլոր ճյուղերով, վոր բնագիտություն վոչ մի դեպքում չի կարող առանց փիլիսոփայական յեզրափակումների մնալ:

Իբրև յեզրափակում բերեմ մի որինակ, վոր փիլիսոփայության հարցին չի վերաբերում, բայց համենայն դեպս վերաբերում է հասարակական խնդիրներին, վորոնց վրա «Մարքսիզմի զրոշակի տակ» հանդեսը նույնպես կամենում է ուշադրություն դարձնել:

Դա մի որինակ է այն բանի, թե ինչպես ժամանակակից իբրև թե գիտությունը իրոք գոհնիկ ու նողկալի յետադիմական տեսակետների կիրառող է հանդիսանում:

Մտաիկ որերում ինձ ուղարկել եյին «եկոնոմիստ» հանդեսի № 1 (1922 թ.), վոր հրատարակում է «Ռուսական տեխնիքական ընկերության» XI բաժանմունքը: Հանդեսն ինձ ուղարկող յերիտասարգ կոմունիստը, վոր (հավանորեն, շաբաթաթերթի բովանդակությանը ծանոթանալու համար ժամանակ չի ունեցել) անզգուշաբար թերթի մասին չափազանց համա-

կրանքով է արտահայտվում: Իրապես թերթը, չգիտեմ թե ինչ աստիճան գիտակցաբար, ճորտության արդի կողմակիցների որդան է, վորոնք, իհարկե, ծածկվել են գիտության, դեմոկրատիզմի և այլ անունների պաճուճանի տակ:

Վոմն պ. Պ. Ս. Սորոկինը այդ հանդեսի մեջ գետեղում է իր լայնածավալ իբր թե «սոցիալիստական» հետազոտությունները «պատերազմի ազդեցության մասին»: Գիտական հողվածը խայտաբղում է հեղինակի և իր արտասահմանյան բազմաթիվ ուսուցիչների ու համախոհների «սոցիոլոգիական» աշխատությունների գիտական ցուցմունքներով: Ահա, թե ինչու մն է կայանում նրա գիտնականությունը:

83 յերեսի վրա կարդում եմ.

«Պետրոգրադում 10,000 ամուսնության ակտից այժմ 92.2 ապահարզանի դեպք է տեղի ունենում (Ֆանտաստիկ թիվ է), ըստ վորում 109 լուծված ամուսնություններից 51,1 դեպքը տևել է մի տարուց պակաս, 11% մի ամսից պակաս, 22% յերկու ամսից պակաս, 41% 3—6 ամսից պակաս և միայն 26% վեց ամսից ավել: Այդ թվերը ցույց են տալիս, վոր ժամանակակից լեզալ ամուսնությունը մի ձեզ է, վոր իսկապես ծածկում է արտամուսնական սեռական հարաբերությունները և հնարավորություն

ե տալիս «յելագի» սիրահարներին «որինավոր» ճամբով բավարարել իրենց ախորժակները»։ («Նկոնոմիստ» № 1, յերես 83)։

Անկասկած է, վոր թե այդ պարոնը, և թե այն ուսական տեխնիքական ընկերությունը, վոր հրատարակում է հանդեսը և նրա մեջ նըման դատողություններ է գետեղում, իրենց դեմոկրատիայի կողմնակիցներ են համարում և մեծապես վիրավորված կլինեյին, յեթե նրանց անվանեյին այն, ինչ վոր նրանք ըստ եյության են, այսինքն՝ ճորտության կողմնակիցներ, յետադիմականներ, «կղերականության դիպլոմավոր լակեյներ»։

Ամուսնության, ապահարզանի և արտաամուսնական յերեխաների, այլ և այդ տեսակետից իրերի փաստացի դրության մասին բուրժուական յերկրներում գոյություն ունեցող որենսդրության հետ փոքրիկ ծանոթությունը՝ հետաքրքրվող յուրաքանչյուր մեկին ցույց կտա, վոր ժամանակակից բուրժուական դեմոկրատիան, նույնիսկ բոլոր դեմոկրատիկ բուրժուական հանրապետություններում, արտաամուսնական կնոջ և յերեխաների վերաբերմամբ, նիշած տեսակետից ինքզինքը վորպես ճորտության կողմնակից է դրսևորում։

Դա, իհարկե, մենշեիկներին, ս.-հ. և անար-

խիստների մի մասին ու Արևմուտքի բոլոր համապատասխան կուսակցություններին չի խանգարում շարունակ աղաղակել դեմոկրատիայի մասին և այն մասին, վոր բայլշեիկները խախտում են այդ դեմոկրատիան։ Իրապես, հենց բոյլշեիկյան հեղափոխությունն է, վոր այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսին են՝ ամուսնություն, ապահարզան և արտաամուսնական յերեխաների վիճակը, միակ հետևողական դեմոկրատիկ հեղափոխությունն է հանդիսանում։ Իսկ դա մի հարց է, վոր յուրաքանչյուր մի յերկրում անմիջականորեն շոշափում է բնակչության մեծ մասի շահերը։ Առաջին անգամ բոյլշեիկյան հեղափոխությունը միայն՝ չնայած զրանից առաջ տեղի ունեցած և իրենց դեմոկրատիկ բուրժուական հեղափոխություն համարող հեղաշրջումների սարվար քանակին՝ վճռական պայքար մղեց մատնանշած ուղղությամբ, ինչպես հետադիմական ճորտական կարգերի, նույնպես և իշխող և ունեվոր դասակարգերի սովորական յերկդիմության դեմ։

Յեթե պ. Սարոկինը 10,000 ամուսնության դեպքից 92 ապահարզանը Փանտաստիկ թիվ է համարում, ապա մնում է յենթադրել, վոր հեղինակն ապրել ու կրթվել է կյանքից միանգամայն կտրված մի վանքում, և հազիվ թե գտնվի մեկը, վոր դրա գոյությանը հավատա, կամ թե այդ հեղինակը ճշմարտությունն աղավաղում է ի հաճույս բուրժուազիայի և ռեակցիայի։ Բուրժուական յերկրների հասարակական պայմաններին փոքր ի շատե ծանոթ անձնավորու-

թյունը գիտե, վոր փաստացի ապահարզանների (անշուշտ, յեկեղեցու և պետական որենքի կողմից չհաստատված) փաստացի թիվը ամենուրեք անչափ ավելի մեծ է: Ռուսաստանն այդ տեսակետից մյուս յերկրներից տարբերվում է նրանով, վոր նրա որենքները, կնոջ և նրա յերեխայի յերկդիմի և իրավագուրկ վիճակը չեն սրբագործում, այլ բացե ի բաց և պետական իշխանության անունից սխտեմատիկ կռիվ են հայտարարում ամեն տեսակի յերկդիմիության և անորինության դեմ:

Մարքսիստական հանդեսը պետք է կռվի նաև այդ ձևի ժամանակակից «քաղաքակիրթ» ճորտատերերի դեմ: Հավանորեն, զբանց մեծ մասը նույնիսկ պետական զբամ է ստանում մեզ մոտ, և պատանեկութունը լուսավորելու համար է պետական պաշտոնի մեջ մտել, թեև այդ նպատակի համար նրանք վոչ ավելի յեն պետքական, քան ամենազազիր գայթակղիչները պետք կգային մանուկների դպրոցական հիմնարկություններում վերակացունների դեր կատարելու համար:

Ռուսաստանում բանվոր դասակարգը իշխանությունը կարողացավ վերցնել, բայց նրանից ոգտվել դեռ չգիտե, այլապես նա նման դասատուններին և գիտական ընկերություններին անդամներին վաղուց արդեն քաղաքավարի յեղանակով ճամբած կլինեք բուրժուական «դեմոկրատիայի» յերկրները: Այնտեղ նման ճորտատերերի համար հարմարագույն տեղն է:

Կտվորի: Սովորելու ցանկություն է հարկավոր միայն:

Ծ Ա Ն Ո Թ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

1) Աթեյիստ.— գերբնական ուժերին չհավատացող, աստու գոյությունը ժխտող մարդ:

2) Ինկվիզիտորական.— ծագում և ինկվիզիցիա բառից. մի հիմնարկութուն, վոր միջին դարերում ստեղծել էր կաթոլիկ յեկեղեցին՝ կռվելու համար հերետիկոսների դեմ, այն ամենի դեմ, ինչ չեր համապատասխանում յեկեղեցական դոգմաներին (դավանաբանութուն). կռիվը տարվում էր տմարդի չարչարանքների, տանջանքների յենթարկելով, խարուչի վրա այրելով և այլն:

3) Կազյոնչչինա.— բյուրոկրատիզմ, հնամուլութուն, անշարժութուն: Պետական կառավարման յեղանակ, վոր ճնշում է հասարակական ինքնուրույնութունը. կառավարելու ձևը՝ վերևից նշանակված չինովներին, վորոնք և կարող են հաշվի չառնել հասարակական կարծիքը:

4) Այսինքն՝ 1905 թ. հեղափոխության հետևանքով:

5) Ռուս սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութուն.— այսպես էր կոչվում մեր Կոմունիստական Կուսակցութունը մինչև 1918 թիվը:

6) Գիտական մատերիալիստական (նյութապատական) աշխարհայացքը յեկնում և այն սկզբունքից, վոր բոլոր յերևութների հիմքում ընդունում է մա-

տերիան (նյութը) աշխարհում վոչինչ չի կատարվում առանց պատճառի: Մատերիալիստական աշխարհայացքը ժխտում է կողմնակի ամեն տեսակի գերբնական միջամտությունը բնություն լերեույթները մեջ, և դրանց բացատրությունը փնտրում է բնության վորոշ որենքներում:

7) Խոսքը վերաբերում է այն ուղիղալ-դեմոկրատներին, վորոնք փորձում են կրոնի դեմ մղվող պայքարը կառուցել հաշվի չառնելով մատերիալիզմը, խուսափելով դասակարգային հեղափոխական պայքարից:

8) Սեվհարյուրակային ջարդեր.— հեղափոխությունից հետո փոստիկանությունը կազմակերպեց սիստեմատիկ ջարդեր՝ մութ մասսաներին վորքի հանելով հրեաների ու հեղափոխականների դեմ:

9) Սուրկով.— Մ պետական դումայի պատգամավոր, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անդամ:

10) Մարքսիզմ.— Կարլ Մարքսի ուսմունքը:

11—12) Մարքս.— (1818 5/IV—1883 14/III) և Ենգելս (1820 28/XI—1895).— բանվոր դասակարգի մեծ ուսուցիչները: Նրանք բանվոր դասակարգի շարժմանը ընձեռնեցին նպատակների ու խնդիրների այն գիտակցումը, վորը և դասակարգային շարժումը դարձնում է գիտակցական: Նրանք բացատրեցին, թե ինչպես պրոլետարիատին շահագործելը, վորի վրա հիմնվում են բուրժուական կարգերն ու կապիտալիստների հարստությունը, վոնչ միայն թշվառացնում է բանվորներին, այլ և միաժամանակ ստեղծում է ու միացնում է պրոլետարական ֆարքիկ-գործարանային մասսան, վորը և գեն կշարտի կտապալի բուրժուական հասարակարգը:

Կապիտալիստական պայքարը— դասակարգային պայքար է, վոր անխուսափելիորեն առաջ կրերի պրոլետարիատի տիրապետություն, նրա դիկտատուրա՝ շահագործման ֆապրդները վերջնականապես ջնջելու համար,— այսպես է Մարքսի ուսմունքը՝ բանվոր դասակարգի պայքարի նպատակների մասին: Այս բոլորը գիտականորեն ամրապնդում է բնության և հասարակության վրա ունեցած այն կարող աշխարհայացքը, վոր կրում է

13) դիալեկտիկական մատերիալիզմ անունը: Հասարակության մեջ և բնության մեջ վոչ մի բան գերբնական ծագում չունի: Բոլոր լերեույթների պատճանները պետք է վորոնել այստեղ, մեզ շրջապատող բնության մեջ: Գիտության համար անհասանելի վոչինչ չկա: Նա ամեն ինչ կրացատրի առանց այլ և այլ աստվածների ոգնություն: Ամեն ինչ ունի սկիզբ, ուրեմն՝ և՛ իր վերջը: Յեվ հասարակության մեջ, և՛ բնության մեջ ամեն ինչ չի զարգանում անսալթաք, անընդհատ, այլ հակասությունների միջոցով: Կորը ծնվում է հնից հեղափոխական ճանապարհով: Վոչ միայն պատմությունը, այլ և, հետևապես, գիտությունը լիովին արգարացնում է և անխուսափելի ու անհրաժեշտ է գտնում պրոլետարական հեղափոխությունը, առանց վորի մտածելի չէ նոր աշխարհի ծնունդը, առանց վորի մտածելի չէ հին աշխարհի ճորտություն և շահագործման կործանումն ու վոչնչացումը:

Իրենց աշխարհայացքը Մարքսն ու Ենգելսը հիմնել են

14) Լ. Փոյերըախի (1804 28/XII—1872 13/IX)

փիլիսոփայական ուսմունքի վրա. Ֆոյերբախը մեծ մատերիալիստ էր, մեր մեծ ուսուցիչներին նախորդող:

15) «Անտի-Ռյուրինգ» — լավագուշն չերկը Ենգելսի. Ռյուրինգի հետ ունեցած բանակովը չափազանց կարեւոր նշանակութիւն ունեցավ. նա Ենգելսին հնարավորութիւն տվեց զարգացնել մարքայան ուսմունքի մի շարք հարցեր և հարստացնել այն:

16) Բլանկիստների մասին ֆեետը. — Յերր Պարիզի կոմունան ճնշեցին, վողջ ֆուսցած կոմունարները փախան գանազան չերկրներ, իսկ ամենից շատ — Լոնդոն: Շատ շուտով նրանցից կազմվեցին բազմաթիվ կրոժոկներ և ֆրակցիաներ: 33 կոմունարներ կազմեցին Բլանկիստների խմբակ և 1874 թ. հրատարակեցին մի մանիֆեստ, վորը Ենգելսի կողմից խիստ ընդունելութիւն գտավ: Այդ մանիֆեստում՝ կրոնին վերաբերող գլուխը այսպես է սկսվում. «Մենք աթեիստներ ենք, վորովհետև մարդը չի կարող ազատ լինել մինչ այն ժամանակ, քանի դեռ նա աստծուն չի արտաքսել իր խղճից և բանականութիւնից»: Քննադատելով աթեիզմին վերաբերող գլուխը, Ենգելսը գրեց հետևյալը. —

«Մեր բլանկիստները բախուհիստների հետ այն ընդհանուր նմանութիւնն ունեն, վոր նրանք ցանկանում են լինել ներկայացուցիչները ամենածայրահեղ ուղղութիւն, ցանկանում են ամենքից առաջ անցնել: Իրա համար ել, ի դեպ նկատենք, նրանք հաճախ ոգտրվում են նույն միջոցներից, ինչպես և բախուհիստները, թեկուզ և հակառակ նպատակների հասնելու համար: Յեւ այսպես, պահանջվում է լինել ամենից ռադիկալ՝ աթեիզմի խնդրում: Ներկայումս, բարեբախտաբար, աթեիստ լինել արդեն դժվար չէ: Յեւ վրոպական բանվորական կուսակցութիւնների համար աթեիզմը հանդիսանում է սոցիալիզմի հետ անբաժա-

ղելիորեն կապված բան, թեև մի քանի չերկրներում նա բավական հաճախ հիշեցնում է իսպանական այն հնազրավաճառի աթեիզմը, վորը (հնազրավաճառը) ասում էր. «Աստծուն հավատալը — ամեն տեսակի սոցիալիզմին հակառակ բան է, բայց կույս Մարիամին հավատալը — դա բոլորովին այլ բան է, նրան բնականաբար պետք է հավատա ամեն մի կարգին սոցիալիստ: Գերմանական բանվոր-սոցիալ-դեմոկրատների հսկայական մեծամասնութիւն մասին կարելի չէ նույնիսկ ասել, վոր նրանց համար աթեիզմը — արդեն անցկացրած աստիճան է. այդ բառը, վոր գուտ բացասական նշանակութիւն ունի, անգործադրելի չէ նրանց նկատմամբ, վորովհետև նրանք արդեն դուրս են գալիս վորպես կրոնի վոչ թեորետիկներ, այլ միայն պրակտիկ հակառակորդներ, — նրանք վե՛ր ջ են տվել Աստված իդեալին, նրանք ապրում և խորհում են իրական աշխարհում և դրա համար ել հանդիսանում են մատերիալիստներ: Հավանական է նույնը կլինի և Ֆրանսիայում: Իսկ չեթե վոչ, ապա ամենից հեշտ կլինել հոգալ, վոր բանվորների շրջանում մեծ չափերով տարածվի ֆրանսական մատերիալիստական փալցուն՝ զրականութիւնը XVIII դարու, — այն զրականութիւնը, վորը իր ձևի և բովանդակութիւն կողմից իրենից ներկայացնում է ֆրանսական հանճարի մինչև որս չեղած մեծագուշն ստեղծագործութիւնը, վորն իր բովանդակութիւնը, ի նկատի առնելով զիտութիւն այն ժամանակվա գրութիւնը, ներկայումս ել դեռ ևս կանգնած է անհասանելի բարձրութիւն վրա, իսկ ձևի կողմից այժմ ել դեռ չունի իրեն հավասարը: Բայց այդ բոլորը մեր բլանկիստներին չի հետաքրքրում: Վորպեսզի ցույց տան, վոր իրենք

բոլորից ել ավելի հեղափոխական են, նրանք, 1793 թ. հեղափոխականների որինակով, Աստծուն մի դեկրետով վոչնչացնում են. — «Թո՛ղ Կոմունան մարդկությունը ընդմիշտ ազատի անցյալի թշվառության այդ ուրվականից (այսինքն՝ Աստծուց), ներկալի բոլոր թշվառությունների այդ պատճառից (գոյություն չունեցող Աստվածը—պատճառ է!): Կոմունայի մեջ քահանան տեղ չունի. ամեն կրոնական մանիֆեստացիա, ամեն կրոնական կազմակերպություն պետք է արգելվեն»: Յե՛վ մարդկանց՝ par ordre du mufti աթեիստներ զառնալու մասին պահանջի տակ ստորագրել են Կոմունայի չեղևու անդամներ, վորոնք, կարծեմ, առիթ են ունեցել լիովին համոզվելու, նախ՝ նրանում, վոր թղթի վրա շատ և շատ բան կարելի չի հրամայել, բայց այդ դեռ բավական չե, վորպեսզի հրամանը իրագործվի, իսկ չեղևորդ՝ նրանում, վոր հետապնդումը ամենալավ միջոցն է հանդիսանում՝ անցանկալի համոզմունքների ամրապնդման համար! Անկասկած է միայն մի բան. միակ ծառայությունը, վոր այժմ դեռ ևս կարելի չի ցուլցց տալ կրոնին, դա այս է—աթեիզմը հայտարարել հավատքի պարտադիր սիմվոլ և, գերազանցելով բիսմարկյան բոլոր որենքները չեկեղեցու դեմ, ընդհանրապես արգելել ամեն մի կրոն:

Ծնգելա՝ «Հողվածներ 1871—1875 թ.»

17) Բիսմարկ (1815—1898)—պետական գործիչ, վորը մեծ ջանք ու ճիգ գործ դրեց՝ Գերմանիան միացնելու համար. կոնսերվատոր (պահպանողական) և սոցիալիզմի թշնամի. նա պայքարել է նաև կաթոլիկության դեմ «հանուն կուլտուրայի»: Այդ պայքարը ուղղակի հակառակ հետևանքներ ունեցավ:

18) Գերմանական սոց.-դեմոկր. 1891 թ. ծրագիրը, ընդունված՝ Երֆուրտում, պարտաշտագում: Ծրագիրը կրոնը հայտարարեց քաղաքացիների «մասնավոր գործ»:

19) Դրական ձևով:

20) Ենցիկլոպեդիստներ—հիմնադիրներն ու աշխատակիցներն են հայտնի ենցիկլոպեդիայի (հանրագիտական բառարանի), վոր լույս տեսավ Ֆրանսիայում (1751—52) Դիդրոյի և դ'Ալամբերի խմբագրությամբ: Ենցիկլոպեդիստն աշխատել են Ֆրանսիայի հայտնի գիտնականներն ու գրողները՝ Վոլտեր, Ռուսսո, Հոլբախ, Հելվեցից և ուրիշները: Ենցիկլոպեդիան նպաստեց գաղափարական և քաղաքական հուզմունքին՝ ֆրանսական մեծ հեղափոխության նախորդակին:

21) Ֆեոդալիզմ—մինչբուրժուական հասարակարգ, վորի բնորոշիչ առանձնահատկութունը՝ խոշոր կալվածատերերի դասի տիրապետութունն է: Պոկրովսկին նշում է հետևյալ չերեք առանձնահատկութունները, վորոնք բնորոշում են այդ հասարակարգը:

...«Նախ՝ խոշոր հողատիրության գերիշխանութունը, չերկիրող՝ քաղաքական իշխանության կապը հողատիրության հետ,—աչնքան ամուր կապ, վոր Ֆեոդալական հասարակարգում չի կարելի չերեակայել հողատիրոջ, վոր այս կամ այն չափով չլինեթ թագավոր, ինչպես և չի կարելի չերեակայել թագավորի, վոր չլինեթ խոշոր հողատեր. և, վերջապես, չերրող՝ այն չուրահատուկ առանձնահատկութունները, վորոնք գոյութուն ունեցին այդ հողատերերի—թագավորների միջև, հողատերերի վորոշ չե բ ա բ ի ա չ ի ներկայությունը, աչնպես վոր՝ ամենախոշորներից կախում

ունելին ավելի փոքրները, իսկ սրանցից կախում ունե-
լին էլ ավելի փոքրները և այլն, և բոլոր սխտեմը,
ամբողջովին վերցրած՝ իրենից ներկայացնում էր մի
տեսակ սանդուխք»:

(«Ռուս. պատմութուն», հատոր I, էջ 32)

22) Մահմանադրական-ղեմոկրատական կուսակցու-
թյուն՝ մեր միջին և խոշոր բուրժուազիայի շահերը
արտահայտող: Առաջին հեղափոխության առաջին իսկ
քայլերից կաղեւոները հակահեղափոխական դիրք
բռնեցին:

23) «Bexu» — գրական ժողովածու, վորի մեջ բուր-
ժուական-ղեմոկրատական ինտելիգենցիան բացատրել
և իր դարձը առաջադիմական նպատակներից դեպի
սեհարյուրակալին-տերտերական նացիոնալիզմ:

24) Անարխիստները — այն մարդիկն են, վորոնք
ժխտում են պետութունը և նրա անհրաժեշտությունը՝
կապիտալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում:

25) Բլանկիստները — հետևորդները Ֆրանսական
հեղափոխական Բլանկիի (1805—1881): Բլանկին, 1830թ.
Ֆրանսական հեղափոխությունից սկսած, մասնակ-
ցել է պարիզյան բոլոր ապստամբություններին: Բլան-
կիստների տակտիկան էր՝ մի խումբ չեռանդուն ու
վճռական մարդկանցով և առանց աշխատավորության
լայն մասսաների ակտիվ մասնակցության քաղաքական
հեղաշրջում առաջ բերել հոգուտ աշխատավորության:
Բլանկիզմը քարոզում էր գաղտնի ղազադրություն և
ապստամբության կազմակերպումն՝ վորպես հիմնական
միջոց սոցիալական հեղափոխության: Բլանկիզմը տա-
րածվեց գլխավորապես Ֆրանսիայում, Իտալիայում և
Իսպանիայում:

26) Միստ — գերմանական անարխիստ. սա և
ավստրիական անարխիստները 80-ական թվականնե-
րին դուրս չեկան կրոնի դեմ և ամենասուբ արտահայ-
տություններով մեղադրում էին այն ժամանակվա
հեղափոխական մարքսիստներին նրա համար, վոր
նրանք իբր չեն մղում իսկական պայքար կրոնի դեմ:
Սակայն այդ անարխիստների կանչերը միայն հուզ-
մունք էին առաջացնում, բայց վոչ վոքի չեղին համոզում:

27) Բելտուսով — III պետական դումայի անդամ,
սոց.-դեմ. ֆրակցիայի անդամ:

28) Ռենեզանտ — դավաճան, նահանջող:

29) Կաղեւոները բաժանվում էին յերկու մասի —
ձախ կաղեւոներ, վորոնց ղեկավարում էր Միլյուկովը,
և աջ կաղեւոներ, վորոնք բավական մոտ էին հոկտեմ-
բերականներին:

30) Պուրիշկեվիչ — դումայի ծայրահեղ աջ պատ-
գամավոր, սեհարյուրակալին, «Միքայել Հրեշտակա-
պետի Միության»՝ ջարդարար կազմակերպության
անդամ:

31) Մտրուվե — եկոնոմիստ. 90-ական թվական-
ներին «մարքսիստ» էր, հետո անցավ բուրժուական
լիբերալիզմի բանակը. հետագա եվոլյուցիան նրան
հասցրեց մոնարխիզմին: Եմիգրանտներից նա այժմ
ամենակատաղի խավարամուլն է:

32) Տես ծան. 23.

33) Պ. Միլյուկով — հրապարակախոս, կաղեւո-
ական կուսակցության ղեկավարը:

34) Տրուդովիկներ — ուսսական նարոդնիկության
աջ թևը — կուլակության և գյուղական բուրժուազիայի
կուսակցությունը: Կազմվեց 1905 թ.:

35) Վ. Պլեխանով (1856—1918)—ռուսական մարքսիզմի հիմնադիրը: Ժամանակակից ամենացայտուն մատերիալիստներից մեկը: Իր գործնելության ամբողջ ընթացքում խիստ պայքար է մղել մարքսիզմի ամեն տեսակի խեղաթյուրումների դեմ: Քաղաքականության հարցերում, 1903 թվին Լենինի և նրա միջև տարաձայնություն տեղի ունեցավ և Պլեխանովը գնաց մենշևիկներին մոտ: Սակայն 1909—1914 թ. թ. նա Լենինի հետ միասին չեռանդուն պայքար մղեց լիկվիդատորության դեմ: 1914 թվից Պլեխանովը գլորվեց դեպի սոցիալ-մենշևիզմ:

36) Ն. Գ. Չերնիշևսկիյ—ռուս մեծ հրապարակախոս: Ֆոյերբախին հեռուց ամենահայտնի ռուս մատերիալիստներից մեկը: Յարական կառավարությունը Չերնիշևսկուն, նրա հեղափոխական գործնելության համար, աքսորեց Սիբիր, ուր և նա անցկացրեց իր գիտակցական կյանքի համարյա կեսը:

37) Ի. Դիցզեն—բանվոր-կաշեգործ. մատերիալիստ-փիլիսոփա: Գերմանացի: Դիցզենը իր աշխատություններին մեջ անց է կացնում մատերիալիստական տեսակետ: Լենինը իր «Մատերիալիզմ և հմպիրիոկրիտիցիզմ» գրքում նրան շատ բարձր է դասում բյուրսերի, Մոլեշտտի և Ֆոխտի կողմից մատերիալիզմից:

38) Հեգել—մեծ փիլիսոփա. նա իր՝ դիալեկտիկայի մասին ուսմունքով մի ամբողջ հեղափոխություն առաջացրեց մինչև իր որերում չեղած փիլիսոփայություն մեջ: Սակայն նրա դիալեկտիկան—իդեալիստական էր: Մարքսին և պատկանում դիալեկտիկան իդեալիզմից մաքրելու և մատերիալիստական դիալեկտիկայի ստեղծման մեծ չերախտիքը:

«Ազգային գրադարան»



NL0170523

ԳԻՆԸ 20 Կ.

Ն. ԼԵՆԻՆ
Рабочий класс
и религия

На армянском языке